







A  $\frac{11}{2000}$

947.925 9(47.925) (197)

---

# 1906

ԵՂԻՇԷ ԹՈՐՈՍԵԱՆ

ՀԱՄԱՌՕՏՈՒԱԾ ՊԱՏԱՍԽԱՆԱԳԻՐ

Հանգուցեալ Տ. Ղեւոնդ Եպս. Երեւանեանի  
Երկաթուղեան ռուբլիանոց դասալիմնում :  
Կաղանդի նուէր - 1 Յունուար 1906

Յ-Ե-Թ-Գ

## " ԻՄ ԱՔՍՈՐԻ ԿԵԱՆՔԸ ..

ԵՐԿԱՍԻՐՈՒԹԻՒՆ

ՀՈՒԵԼՈՅՍ Յ. ՂԵՒՈՆԴ ԵՊՍ. Ի ԵՐԵՄԱՆԵԱՆ  
Կարնոյ, Խարբերդի, եւ ուրիշ զաւառաց Առաջնորդին.

ԳՐԱԿԱՆ ԾԱԾԿԱՆՈՒՆՆԵՐ

ԳԻՐՈՒԿ, "ՄՇԱԿ,, Ի. ՀԱՅՈՐԴԻ, ՄԵՐՈՎԻԿ "ԱՐԵՍԼՈՅՍ,, Ի  
ՀՆԳՒՆԱԿ

### ՑԱԻԵՐԳՔ ՀԱՅՐԵՆԵԱՑԻ



ԳԱՀԻՐԷ

Յպագր . Ե . ԹՈՐՈՍԵԱՆԻ

1906





# ԵՂԻՇԷ ԹՈՐՈՍԵԱՆ

ՅՒԱՔՍՈՐԻ ՀԱՆԳՈՒՑԵԱԼ ԳԵՐ. Տ. ՂԵՒՈՆԴ ԵՊՍ.

ՇԻՇՄԱՆՆԱՆԻ

ԳԵՐԵԶՄԱՆԻՆ ՀԱՆԳԻՍՏԸ ՎՐԴՈՎՈՂՆԵՐՈՒՆ

## ՀԱՄԱՌՕՏՈՒԱԾ ՊԱՏԱՍԽԱՆԱԳԻՐ

.. ՅՈՒ .. քսի ես ինձի .. պէտք է  
վիտաիլ ու սխիլ . անողոք է  
ժամանակը . անողոք է եւ պատ  
մուրիւնը , որ օր մը , ամէն քան  
լուսոյ մէջ պիտի զնէ... :

ԱՔՍՈՐԱԿԱՆ

աւտիպ երկասիրու քիս

Ա. հասար երես 122

Սրուան հրատապ խնդիրներէն մին պիտի ըլ-  
լայ՝ կը կարծենք , « ԱՔՍՈՐԻ ԿԵԱՆՔ » ին հրատա-  
րակութեան գործը , որ հինգ վեց ամիսներէ հե-  
տէ մաքե՛րը կ'ըբաղեցնէր . . . .

Հակառակ պարտաւորիչ և շգուշաւոր լու-  
թեան մը մէջ գործելու մեր տենջանքին , — ո-  
րովհետեւ իրական գործունէութիւնը և մանա-

ւանդ ձեռնարկի մը յաջողութիւնը ա՛յդ կը պահանջէր, — մեր հրաւիրանօք կազմուած Գահիրէի կարգադ. Մասնախումբը՝ փութկոտ իմն եռանդեամբ, և աւելի կը պատշաճի ըսել, ծամածուռ և ոլորապտոյտ միջոցներու դիմելով, « Իմ Ա. քսորի կեանքը » երկին հրատարակութեան խնդիրը այսպանելի միտումներով մամուլի սեղանին վրայ դրաւ։

Շատ կանխահաս էր այսպիսի քայլ մը, և չ՛կա՛յ արդարացուցիչ միջոց մը՝ առնուած այս սխալ քայլին ֆնասակար կողմերը պաշտպանող և մեկնող։ Իայց անշուշտ այս շարժման քայլամուտը հեղինակներն են, որ իրենց վրայ պատասխանատուութեան ծանրութիւնը պիտի կրեն . . . :

Մեր մէջ, ինչպէս շատ անգամ պատահած է, երբ կարեւոր ձեռնարկ մը ո՛ր և է իրաւ կամ անիրաւ պատճառներով և անակնկալ խոչնդոտներով անյաջողութեան մասնուելու վտանդին մօտեցած կը տեսնուի, այն ատեն՝ տենդալի յուսահատութիւնն է որ ամէն կողմ իր վերօն կը տարածէ, ու պէտք եղած ջանքերը չեն նուիրուիլ վերահաս վտանգը հեռացնելով ուղղակի դէպի նպատակակէտը դիմելու, այլ՝ ձեռք կ՛առնուին այնպիսի միջոցներ, որ շատ խոտորնակ կերպով կը համեմատի քաջակորով յորջորջուած գործունէութեան և անկեղծ ազդասիրութեան հետ։

Այս գործելակերպին « դիւանագիտական — քաղաքականութիւն » անունը տուած են, որ բազ-



միցս նեղ սահմաններու մէջ թէև՝ սակայն ի դորձ կը դբուին վերջապէս, և մեզմէ շատերը խիստ լաւ գիտեն թէ՛ ի՞նչ կը նշանակէ այս « գիւանագիտութիւնը . . . » :

Հաշիւ եղած է որ, եթէ հայերը մեծ կամ փոքր իշխանութիւն մը ունեցած ըլլային, այդ գերահրաշ հանդարտութեան մէջ տարեկան առնուաղն 40,000 Պիզմարքներ պիտի ծնէին միմեանց յաջորդող սերունդներէն, և շեռ գիտերքանի՛ քանի՛ միլիոն ալ գիւանագիտական թըղթակցութիւններ պիտի փոխանակուէին. եւ մի՛ թէ, եթէ այդպիսի երջանիկ թուականի մը մէջ կարգալու բաղդը ունենայինք « Ազատ-Բեմ » ի 31 և 34, ինչպէս նաև « Հորիզոնի » 42րդ. թիւերուն մէջ « Արտրի Կեանք » ի բաժանորդագրութեան հսկելու կոչուած կարգ. մասնախմբին կողմէ և թելադրութեամբ հրատարակուած գրութիւնները, գիւանագիտական չ'պիտի՞ անուանէինք . . . » Ահա մեր ակնարկած այդ քրժուն նմոյշները :

« Ա.ԶԱՏ ԲԵՄ », Գ. ՏԱՐԻ ԹԻԻ 31



“ ԻՄ ԱՔՍՈՐԻ ԿԵԱՆՔԸ ”

Ծանօթ. Խնքագր.

Հանգուցեալ Ղեւոնդ Եպիսկ. Շիշուսեանի ծանօթ



աւելի յաջող պարագային, առանց ո՛ր եւ է ըստորագրութեան, Հիւսա Թորոսեան Գահիրէ վերադարձած է եւ կը լսենք թէ հո՛ս ալ սկսած է ի գործ դնել իրեն մասնաւոր փութաջանութիւնը : Մասնախումբը կ'երեւի թէ նոր ճանչցած է իր մարդը, եւ անկարելի նկատելով փափաքելի ճամբով նպատակն իրագործելու՝ լուծուած է եղեր : Կը կասկած ինք որ մասնախումբի անդամներէն ստորագրուած բաժանորդագրութեան տետրակը բաւական ժամանակ պիտի կրնայ չահադիտութեան իրրեւ միջոց ծառայել : Կը յուսանք թէ եգիպտահայ մամուլը արգելք պիտի ըլլայ այս գեղծումներուն :

Կարգ. Մասնախումբը, ուրկէ՞ ինչպէս հաստատած են ր՝ անուղղակի միջոյններով կը բղխի վերայիչեալ. հայհոյալից, նենդամիտ ու թըշնամական տողերը, հակառակ զայնս կեղծ աղգասիրութեան, և որպէս թէ՛ անյեղի պարտաճանաչութեան մը սնգոյրովն ու շպարովը գեղազարդել ջանալուն, բացայայտ կերպով ցոյց կուտայ իր կրած դժոխքներ ոգին և հանդուցեալ հաւակրելի (? ) եկեղեցականին հեղինակութիւնը տապաքրուած տեսնելու գործին հանդէպ տածած քաւի տրամագրութիւնները : Սակայն սրովհետև ողջամիտ ընթերցողներու կողմէ արդէն պէտք եղած արհամարհանքը նետուեցաւ անոր վրայ, ուստի

մենք ալ զանց կընենք անով երկար բարակ զբաղիլ :  
Կ. Մասնախումբը այդ շարահնար միջոցով  
դուռ մը բանալ կ'ուզէր պարզապէս, որպէս զի  
անկէ ասպարէզ մտնէ, գործը իր քաւումն նպա-  
տակին հասցնելու և ուղած կաղապարին թափելու  
համար, ինչպէս որ քիչ մը վարը պիտի տեսնենք :

---

ԴԱՐՁԵԱԼ « ԻՄ ԱՔՍՈՐԻ ԿԵԱՆՔԸ »

ԱԶԱՏ ԲԵՄ Գ . ՏԱՐԻ ԹԻԻ 34

---

Մակօր . Խմբագ.

ԱԶԱՏ ԲԵՄԻ 31րդ. քունով հրատիրած էինք  
« Իմ Աքսորի Կեանքը » անուն գործին հետ կապ  
ունեցող անձերը որպէսզի հրապարակաւ բացառ-  
ուրիւն ջան ներկայացուած կարգ մը դիտողու-  
թիւններուն : Կարգադիր Մասնախմբէն ընդունած  
ընտրով հետեւեալ պատասխանը. ստորեւ կը հրատա-  
րակենք զայն.

Հանգուցեալ Տ. Ղեւոնդ Եպ. Շիշմանեանի  
գրած « Իմ Աքսորի Կեանքը » գրքի ձեռագիրը  
կը գտնուի Տ. Ե. Թորոսեանի քով՝ երկար ժա-  
մանակներէ ի վեր. հրատարակութիւնը 200 էն



այն պատասխանատու կը մնայ. քանզի հրա-  
ժարեալ մասնախմբի կողմէ ոչ մէկ ընկալազիր  
կնքուած կամ ստորագրուած է:

Արդ. զայս ի գիտութիւն ծանուցանելով  
արգոյ ազգայնոց Ձեր միջոցաւ կը ներկայա-  
ցընենք մեր յարգանքները:

Հրաժարեալ Կարգադիր Մասնախմբի քար-  
տուղար՝

Վ.ՐԵԳԻՆ ՊԱՀԼԱԻ

Փահիրէ 28 նոյեմբեր 905

Նեղոսի հիւրընկալ հովիտն ճահճային եղեղ-  
նուտներուն մէջէն կոկորդիլոսի արցունքներ ար-  
տահասող Տիար Գ. Պահլաւ և համախոհք, մտու-  
նալով գերազանցօրէն ազնիւ և անժխտելիօրէն  
նուիրական պարտականութեան մը առջև դրու-  
նուած ըլլալնին, քայլամուտք կը գեղերին սահ-  
մանի մը մէջ, ուր հասնելու համար պէտք էր՝  
նախապէս բարեկենդանի կեղծաթոյր գիմակովը  
զարդարուիլ, ստութեան, և ուրացումի շտեմա-  
րան մը կլլիլ անյագ, բարոյականը անխղճօրէն  
մտաւայու ի քասօը նետել, մարդահաճութեան  
տիպար հանդիսանա, , և կեղծիլը՝ մը նեխումի  
աւարտոյ աստիճաններուն յրայ կը գտնուի,  
գրկարաց և սիրալիր ընդունիլ նե՛րա . . . գէպի  
ահազնազղորդ անկում և ստորնայած փճա-  
ցում . . . գէպի . . .

Մենք անյնինք « Ազատ Բեմ » էն գէպի « Հո-

բիզնէս՝ ուր գէշ պրերը բաւական տարբեր կերպով և  
զոյնով մեկնուած են «ԲԱՅԱՏՐՈՒԹԻՒՆ» խորագր-  
քին ներքեւ, դարձեալ Տ. Պահլաւի կողմէ, որ բա-  
րեպատեհ հանդիպումն՝ մը, գոնէ ի շնորհս «Ա.ք  
սորի կեանք» ին, յիշատակութեան կ'արժանա-  
նայ. առիթ մը՝ որ կ'արժէր ժամանակի յա-  
ռադիմող հոսանքին և յարմարագոյն պարա-  
գաներու մէջ ոչոնեւ, այլոց սաղրանքներն ար-  
ձագանքելու և որդեգրելու արարքին մէջ բըռ-  
նուելով՝ խղճահարութենէ շտառապելու համար:

## ՀՈՐԻՉՈՆ Ա. ՏԱՐԻ ԹԻՒ 42

### Բ Ա Յ Ա Տ Ր Ո Ւ Թ Ի Ի Ն

Հանգուցեալ Տէր Ղեւոնդ Եպիսկոպոս Մ.  
Շիշմանեանի գրած ԻՄ ԱՔՍՈՐԻ ԿԵԱՆՔԸ գրքի  
ձեռագիրը որ կը գտնուի Տիար Եղիշէ Թորոսեա-  
նի քով երկար ժամանակներէ ի վեր. և որուն  
հրատարակութիւնը 200 էն 250 ոսկի ծախուց կը  
կարօտի եղեր. հետեւաբար նոյն ձեռագրի ա-  
ւանդապահ ինքզինքը համարող Տ. Ե. Թորոսեան  
ենդս կը գիտէ Գերապատիւ անձնաւորութեան  
մը և անոր հովանաւորութիւնը ու աջակցութիւ-  
նը կը խնդրէ նոյն գրքի հրատարակման համար:





Արդ զայս ի գիտութիւն ծանուցանելով  
յարգոյ ազգայնոց Ձեր մեջոցաւ կը ներկայա-  
ցընենք մեր յարգանքները:

Հրատարեալ կարգադիր մասնախմբի

Քարտուղար՝

ԿԱՐԵԳԻՆ ՊԼԷՂԱԻ

Թողլով Ազատ-Քեմ յի ՅԱրդ, թուով ու-  
ղորմած հոգի կարգ. Մասնախմբի կենդանի փաս-  
տաբանին կողմէ հրատարակուած կէս-թշնամա-  
կան ակնարկագիր թղթակցութիւնը, որ ինչպէս  
կուսակցի է, կարգ. Մասնախմբին կամ անոր ան-  
դամներէն միոյն խելագատակէն ծնած էր՝ պար-  
զապէս այդ խնդիրը հրապարակ դնելու ազնիւ  
գիտաւորութեամբ, մենք անդրադառնանք թիւ  
54-ով կարգ. Մասնախմբի Քարտուղար Տիար Գա-  
րեգին Պահլաւի կիսապաշտօնական նամակին, որ  
հակառակ ի վերեւ զայն դիւանագիտական տիտ-  
ղոսին տակ դնելու համար բրած զօրաւոր ջան-  
քերնուս, օրինական շատ մը թերութիւններու  
հետ, կը պարունակէ նաեւ կարգ մը սուտ և ան-  
ճանաչելիօրէն խեղաթիւրուած իրողութիւններ:

Մեր ըսածները հաստատելու համար հարկ  
է որ յիշեալ նամակէն մէկ քանի հատուածներ  
մէջ բերենք, բուն իրողութեանց հետ միասին ըն-

Թերցօղին լուրջ ուշադրութեանը ներկայացնելու համար զանոնք ։

Մարդահաճոյ Քարտուղարը ինչպէս վերը տեսանք, հետեւեալ կերպով կ'սկսի իր պաշտօնական գրութիւնը ։

« Հանգուցեալ Տ. Ղեւոնդ Եպ. Շիշմանէ սնի գրած « Իմ Ախորի Կեանքը » գրքի ձեռագիրը կը գտնուի Տիար Ե. Թորոսեանի ֆոյ. երկար ժամանակներէ ի վեր. հրատարակութիւնը 200 հն 250 ոսկիներու կը կարօտի եղեր ( \* ) . հետեւաբար նոյն ձեռագրի աւանդապահ ինքզինքը համարող Տ. Թորոսեան կը դիմէ հոս Գերապօսիւ անձնաւորութեան մը եւ անոր աջակցութիւնը կը խնդրէ եւլն . . . »

« Արշալույս » ի 1902 ի թիւերուն ուշադրութիւն ընողները, պիտի կրնան յիշել թէ՛ « ԻՄ ԱՔՍՈՐԻ ԿԵԱՆՔԸ » մամլոյ տակ գրուած ըլլալու յայտարարութիւնը եղած է ձեզ քանի թերթերու ձեջ . հետեւաբար անոր հեղինակը ի կենդանութեան իսկ՝ ո՛չ միայն աւանդապահ նշանակած էր Տ. Թորոսեանը, այլ և արտօնած անոր հրատարակութիւնը ։ Միայն նիւթակահի խնդիրն էր որ Տամակէսի սուրբին նման կը տատանէր ձեռնարկին վրայ, և անիրականալի կը դարձնէր ։

( \* ) Ստորագծուածները մեր կողմէն է. Ծ. Հ

Տխար Պահլաւ և մասնախումբը Վիէննայի Տպարանական Վարչութենէն անոր տպագրութեան ծախուցը համար, իրենց յանձնարարութեամբ և Տ. Ս. Քորոսեանի միջոցաւ Օգոստոսի վերջերը յատկապէս ուղուած՝ իսկ Սեպտ.ի կիսուն ընդունուած Հաշուեցուցակը կարգալէ և իրենք ալ հաշուելէ յետոյ, ոչուն գումարը վեր ի վերոյ 215 ոսկիի կը բարձրանար, առանց հաշույ մէջ գրուելու 14 լուսանկարները և անոնց յատուկ թղթերը, ի՞նչ նպատակաւ արդեօր հրատարակութեան տուած իր Վերոյիշեալ նամակաց մէջ անոր ծախքերուն քանակը թէ ուրքեամ տակ ձգել կուզէր, « հրատարակութիւնը 200—250 ոսկիի կը կարօտի ՆՂՆՐ », անպատկառ սուտովը ։

Եւ դարձեալ քանի որ ինք՝ և որ ընդ նման փարիսեցիք և կեղծաւորք, իրենց գրածներովը կը խոստովանին թէ՛, « երկար ժամանակներէ ի վեր ձեռագիրը Տ. Քորոսեանի քով կը գտնուի, » ինչո՞ւ ուրեմն կասկածի ենթարկել կը փորձեն իրոցն ընդունած ճշմարտութիւնը, « հետեւաբար նոյն ձեռագրի առանդապահ ինկզիմիք հասնաւորոյ, անուանելով Տ. Քորոսեանը. հոս ալ թագուն նպատակ մը պէտք և կարելի չէ նշմարել . . . » Եւ ո՞վ զիրենք կ'ստիպէր բուն նիւթէն մինչև այդ աստիճան սպառնալու հեռանալ . . . , արժանանալու համար մեր Նազովրեցի Յեղափոխականին ախոսանաց, որոցմով զգաստանալու կը

հրաւիրէ իր հալածիչները անոնց երեսին տալով  
« Վա՛յ ձեզ դպրաց և փարիսեցւոց կեղծաւորաց  
որ ըզ մօղուկս բամէք և զուլտս կլանէք. . . » Ը  
Վերոյիշեալ Հաշուական խնդրոց անդամ  
մ'ալ չ'վերադառնալու համար ակնարկուած Վի-  
էննական նամակները հոս կը զետեղենք :

Ծանօթ .— Պատասխանագիր Մատենադարանա-  
պետ Վեր . Հ. Բ. Պիլիգիկձեանի, որուն ուղղուած էր  
հարցումը Թորոսեանի միջոցաւ :

Վիէննա 15 Սեպտեմբեր 1805

Մեծ Տիար Եղիշէ Թորոսեան  
ի Կահիրէ

Շնորհակալութեամբ ընդունած եմ Ձեր կրկին  
նամակներն ու « Էրշալոյս » ները :

« ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ ՆՈՒՊԱՐ ԲԱՇԱՅԻ » եւ « ՏԱ-  
ԻԲՐԳԻ ՀԱՅՐԵՆԵՆԱՅ » գրքերը յանձնած եմ Հանդիսի  
Խմբագրութեան :

Իսկ « ԱՔՍՈՐԻ ԿԵԱՆՔԸ » Գործոյն ապագրու-  
թեան կամ թուղթը խաւրկելու մասին ձեզ այս օրե-  
րըս կը գրէ մեր ապարանի Վարիչը Հ. Դանիէլ Վ.  
Աբիկեան, որ այս օրերս դարձաւ քաղաքս :

Յարգանօք եւլն.

Հ. ԲԱՌՆԱԲԱՍ ՊԻԼԵՉԻԿՁԵԱՆ

Վիկենցայի Մխիթարեան Տպարանի Վարիչ Հ. Դա-  
նիկ Վրդպ. ի պատասխանագիրը :

Վիէննա 19 Սեպտեմբեր 1905


Յարգելի Խմբագրութիւն « ԱՐՇԱԼՈՅՍ » ի  
Ի Գահիրէ

Ի պատասխանի Ձեր Հ. Բառնարաս ուղղեալ նո-  
ժակին ա՛յն մասանց որ ապարանի կը հային . կը  
յայտնեմ թէ՛ Ա. - Բաֆֆիի մեր քովը ապուած գրոց  
թղթով . զիրքով եւ տառով գործի մը իւրաքանչիւր  
12 էջով թերթի ( Յօրևս ) 2000 օրինակը կ'արժէ 84  
քրօնէ ( մէկ քրօնէ եղիպտական 4 զուրուշ ողջն է )  
ուստի եթէ նոյն գործը 60 թերթ տայ ( այսինքն  
եթէ զիրքը 960 երեսներէ բողկանայ ) ամբողջ գոր-  
ծը պիտի արժէ 5040 քրօնէ . այս գնոյն մէջն է 2000  
ծածկի եւ թղթակազմի գինը : Բ. - Բաֆֆիի գործոց  
թղթոյն 100 քիւտն ( որ կը բովանդակէ 2500 կրկին  
թերթ ) կ'արժէ Bord Alexandrie 64 քրօնէ : Ըստ  
այսմ ձեր գործոյն 2000 օրինակին համար ( ենթա-  
դրելով որ 16 էջնոց 60 թերթէ պիտի բաղկանայ )  
պէտք ունիք 2000 կամ ճիշդ եւս 2500 քիւտն . վասն  
զի ապագրութեան ժամանակ 20 առ հազար կը փը-  
ճանայ : Ուստի 2500 քիւտն պիտի արժէ Bord Alex-  
andrie 1600 քրօնէ : Ասկէ զատ Աղեքսանդրիա կայ  
կարծեմ 8—8 1)2 մաքս . որ կ'ընէ 136 քրօնէ . զար-  
ձեալ Աղեքսանդրիայէն մինչեւ Գահիրէ ճանապարհա-  
ծախք . որ չեմ գիտեր որչափ կ'ընէ եւլն . եւլն :

Յարգանօք եւլն .

Հ. ԴԱՆԻԷԼ ԱՅԻԿԵԱՆ

Պակ Երկրորդ



Սոյն նամակները՝ որ Մասնախմբին բոլոր անդամոց ալ զատ զատ ընթերցման տրուած է , մե՛նք ալ կարդալէ յետոյ՝ անցնինք հետեւելու կարգախօս Տիար Քարտուղարին անխնայ թխած պարբերութեանց երկրորդ հատուածին :

« Հետեւաբար Գեր. Սրբագան հօր. հրաւիրակոս Մասնախումբ մը կը կազմուի. Սակայն սոյն մասնախումբը, բաժանորդագրութեան ճեսակը ստորագրելէ անդին դեռ ո՛չ մի այլ գործնական փայլ չ'առած, կը մտնուցանէ իր հրաժարականը գինքը հրօշիւրոց ու կազմող Գեր. Սրբագան Հօր. Ահաւերով ուր, անկարելի պիտի շինի Տ. Ե. Թորոսեանի հետ համերաշխ գործունէութիւն մը ունենալ՝ այսպիսի կարեւոր ձեռնարկ մը ի գրուի հասնելու հաւար »

« Աքսորի կեանք » ին հրատարակմանը ձեռնարկելու գործողութիւնները հետեւեալ ստիպողականութեան ներքե կ'սկսին .

Տարուոյ Ապրիլ ամիսէն սկսեալ այդ կարեւոր երկասիրութեան առանդապահ ինքզինքն հաւատարոյիս ականջը կը հասնի, իրեն համար բընաւիմը անախորժ՝ և իր նկարագրին բոլորովին չի պատահող տարածայնութիւն մը զոր ո՛ր և է կերպով չուզեր մարտել . — յայտնի բան էր որ այս տարածայնութիւնը Պօլսոյ ճնշող մթնոլորտին զարմանազան երանայթիւնքը տեսնող՝ և Եգիպտոսի ազատ միջախայրին թոյլտուութեանց

անձանօթ նորահասի մը գերազրգուած երևա-  
կայութենէն դուրս կուգար... — և իր հաւատա-  
րիմ աւանդապահութիւնը ամէն կասկածէ ու  
տարակոյտէ վեր բռնելու անպատմելի մտատան-  
ջութիւններէն պաշարուած, ուր ուրեմն՝ Մայիս  
ամսոյ մէջերը կ'որոշէ իր գործը թողուլ և Ա.ք-  
տորի Կեանք յին ձեռագիրները մեկտեղ առած  
Աղէքսանդրիա կը մեկնի, անտի Կովկաս երթալու  
և Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետին խը-  
նամոց և հոգածութեանը յանձնելու համար  
զայնս յարմար առթիւ մը ի տպագրութիւն .

Աղէքսանդրիոյ Առաջնորդարանէն պէտք ե-  
լած պաշտօնական կայաթուղթը ( \* ) առնելով

---

( \* ) ՊԱՏՃԷՆ ՎԿԱՅԱԹՂԹՈՅՆ

COMMUNAUTE ARMENIENNE  
CONSEIL

Alexandrie le 29 Mai 1905

Monsieur le Directeur  
du Bureau du Passeports E. V.  
Monsieur ,

J'ai l'honneur de vous prier de bien  
vouloir délivrer au porteur Mr. Yéghiché Toros-  
sian un passeport en due forme pour la Russie.

Agréé Monsieur, mes compliments em-  
pressés.

le Secrétaire  
M. TELYAN

աւանդապահ ինքզինքը համարող՝ Տ. Թորոսեան անցագիրը կը պատրաստէ, սակայն զանազան արգելառիթ պատճառներ և մանաւանդ Ռուսիոյ քաղաքական այն առեւտրի խառնակ կացութիւնը՝ որ ցարդ կը շարունակուի՝ արգելք կը հանդիսանան այդ ճամբորդութեան:

Տիար Թորոսեան՝ իր այս անյաջողութեանց պատճառած վշտերուն տպաւորութեանը տակ գլխահակ և խորապէս տխրայոյզ, քանի մը օր կը դեզերի Վզէքսանդրիոյ մէջ, զանազաներու կողմէ իրեն եղած այլևայլ ստապատիր խոստումներուն հաւատ ընծայելով, և յուսալով միանգամայն թէ՛ վերջապէս կերպով մը գոնէ եզիպտոսի մէջ պիտի յաջողի այդ կարևոր գործը ի գլուխ հանելու, և միանգամ ընդ միշտ ազատելու առանդապահ ինքզինքը հաւանքելու նեղացուցիչ ու տաղտկալի մտահոգութիւններէն . . . :

Վայրկեանէ վայրկեան ամէն յոյս վախուստ կուտայ Տ. Թորոսեանի առջևէն, և օրին մէկը՝ այլ ևս խալառ յուսակտուր՝ ձեռագիրը կ'առնէ և Վզէքսանդրիոյ Առաջնորդարանը կը գիւնէ ու գաղտնաբար իր ճամբորդութեան բուն նպատակը կը պարզէ Խորհրդոյ Փաստաբան-Խորհրդական և իր ու հանգուցելոյն ալ բարեկամ՝ Տ. Թեւեանի՝ և անոր աջակցոր իշնները կը խնդրէ . . . :

Տիար Մ. Թեւեան հիացումով մը թղթատելէ



յետոյ ձեռագիրը, պէտք եղածը ընել կը խոստանայ. միայն խնդիր էր թէ՛ իր պաշտօնական գիրքը պիտի ներէ՞ր այդօրինակ ձեռնարկի մը մէջ անձամբ երևայ :

Յեա երկար խորհրդակցութեանց, յարմար կը գատուէ խորհրդոյ Վսեմ. Ատենապետին հարցընել Տիար Կ. Միհանօֆի միջոցաւ, որուն բերած պատասխանը՝ եթէ՛ Ն. Վսեմութեան իսկական զգացմանց ճշգրիտ թարգմանութիւնն իսկ չ'ըլլար, գոնէ բացարձակապէս ժխտական էր...

Նոր օր՝ և նոր խորհրդակցութիւններ Եւ վերջապէս խնդիրը կը յանգի ա՛յն եզրակացութեան թէ՛ բաժանորդագրութեան միջոցաւ կարելի է այս տեղ լրացնել այդ գործը :

Քանի մը օր ալ՝ և վերջապէս Պատ. Խորհրդոյ Գիւանատան մէջ, Տիարց Մ. Թելեանի և Կ. Միհանօֆի հետ խորհրդակցութեամբ կը խըմբագրուի բաժանորդագրութեան կոչը և անոր յտակից գուղակը կը պատրաստուի, շատ մը յաջողութեամբ ապահովելու համար յանձնարարական և նորանոր խոստումներու հեշտօրօր երազներու արդեցութեան հետեւ շարունակելու...

Վարդ. Մասնախմբի մը հոյանաւորութեան տակ գնելու էր՝ բաժանորդագրութիւնը Գաղձեալ Տ. Ս. Խորոսեանն է որ կը յոգնի. ասդին անդին կը յաշտընէ. բոլորեւեայ մարդ էր կը վերնտուէ. մեծ ծանօթ հաստատութիւններու հոյտեր



կերպով սպառելու խոհեմութեամբ և նպատակաւ, կ'որոշէ Գահիրէն ալ Աղէքսանդրիոյ նման գործունէութեան մէջ դնել, և [Թողլալ] այնտեղի բաժանորդագրութեան շարունակումը, Գահիրէ կը վերադառնայ նմանօրինակ կազմակերպութիւն մ'ալ հոն ընելու գիտաւորութեամբ:

Առանց ժամանակ կորսնցնելու նամակագիր Տիար Կ. Պահլաւի ակնարկած Գերապատիւ անձնաւորութեան (որ մանուշակէ օրինակուած համեստութեամբ մը ինքզինքը կը ծածկէ՝) կը դիմէ նախագէտ սիրտը իր բանայ. սպատակարաները և եղելութիւնները կը պատմէ՝ որ ի յարդանս յիշատակի Հանգուցելոյն, կ'ընդունի նախագահել Գահիրէի նոր կազմելի մասնախմբին:

Գահիրէի մէջ ալ Աքսորի կեանք ին բաժանորդագրութեան ցուցակը կը պատրաստուի, յար և նման Աղէքսանդրիոյ մէջ պատրաստուածին՝ Օգոստ. 16 [Թուականաւ: Քանի մը օրուան վարանումէ, խորհրդածութիւններէ և երկրորդական ինդիքներու վրայ շարք մը բանակցութիւններէ և առարկութիւններէ յետոյ, Գեր. անձնաւորութիւնը՝ կ'ստորագրէ իբր նախագահ Կարգ. մասնախմբին և Տիար Թորոսեան նորէն այնտեղ ալ գործի կը ձեռնարկէ, Աղէքսանդրիոյ մէջ պատահածին յար և նման անբացատրելի նիւթական և բարոյական դժուարութիւններու, անհամար հո-

դեկան տառապանքներու, տագնապներու և վիշտերու մէջ ց' հազազ խորասուզուած և յսու ամենայնիւ հոս ալ բաժանորդագրուողներու թիւը օրէ օր կ'ստուարանայ և քիչ ատենէն 100ը կը անցնի . յաջողութեան նոր զարկ մ'ալ ահա :

Գեր. նախագահը սակայն առանձին գործել չ'ուզեր: Տիար Թորոսեան ամենայն փափկանկատութեամբ և օրինակելի զգուշաւորութեամբ խորհրդակցաբար անձեր կը ներկայացնէ. Գեր. նախագահին հաւանութեանը, որպէսզի անոնց մէջէն ընտրութիւններ կատարէ. իսկ ընտրուածներէն ոմանք իրաւազի պատճառներով չեն հաւանիր գործակցիլ, ոմանք այլևայլ նկատումներով կը մերժեն իրենց եղած առաջարկը, և վերջապէս՝ կը ամբողջանայ կարգադիր մասնախմբի անգամաց թիւը, որ է՝ նախագահ, Ատենապետ, Ատենագրչար, Գանձապետ և Քարտուղարը՝ Տիար Գարեգին Պահլաւ:

Այս քանակութեամբ անհատաբար ստեղծուած խորհրդագրական գործողութեանց հետ, մինչև Անգլո-տոմարէր 7րդի ամսին:

Այդ միևնույն թուականին — 7 Սեպտ. — կարգման հանձնարարութեամբ, և ո՛չ թէ՛ բաժանորդագրողներու ստուգողական աստուածային անհատաբար, ևնչպէս կը պարտենալէր « Ազատ Բնո՛ր» թիւ 51 ըն սէջ Իսահրէր թղթակցի մը անստորագիր ամաստտանագիրը, Տիար Թորոսեան վերստին Ազէրսանդ-

բիա կը մեկնի, հոն իր բաժանորդագրական և  
ուրիշ յարակից գործերը շարունակելու համար:

Այս ճամբորդութեան պահուն, կարգադիր  
մասնախումբը երեք ոսկի կը տրամադրէ և կը  
յանձնէ Տիար Թորոսեանի, կարևոր ձեռնարկ ին  
վերաբերեալ զանազան ծախքերու և միանգա  
մայն ճանապարհածախուց ի գործածութիւն:

Թորոսեան այն ինչ Աղէքսանդրիա կը հաս  
նի, մէկ երկու կարևոր դէպքեր կը պատահին և  
այս ամենուն հետ՝ ուրիշի մը միջոցաւ ստացուած  
կ'ըլլայ նամակի մը պատասխանը, զոր ուղղած էր  
Թորոսեան կարևոր հասցէի մը, Օգոստոս ամսոյ  
սկիզբները:

Պատասխանագիրը՝ — որոշապէս չենք գի  
տեր թէ ի՞նչ հիման և պատճառներու վրայ  
դուած — շատ աննպաստ էր եղած գիմումին.  
և ա՛յն անձը՝ որ այդ թղթակցութեան միջնորդ  
կը հանդիսանար, Թորոսեանի թղթակցին գերա  
զանց մտաահուածիւնը դուած րոյալուն համար,  
որոշուած պատասխանը սուս շատ փառ Թորոս  
եանի դաշտնապէս հաշտութիւնը ի պարտու պատ  
շաճ զգուշութիւն, ուրիշներու ընթերցման կու  
տայ, այնպէս որ քիչ սեւանակը մէջ ականջնե  
րէ մտածաստոններու մեջոցաւ Աղէքսանդրիայ ժո  
ղովրդեան ամէն խաւերուն մէջ ալ կը տարած  
ուի անո՞ս պատունակութիւնը, որով Թորոսեանի  
յ'ընթացս բառեակ ամիսներու ի գործ դրած բո

լոր ջանքերն ու զոհողութիւնները ջրասոյզ կը կորչին, և բաժանորդագրական գործողութիւններն ալ ի հարկէ ստիպեալ պահ մը դադար կ'առնեն:

Թորոսեան իրողութիւնները իրենց ժամանակին գրապէս կը ծանուցանէ Գահիրէի Վերապ՛նախագահին, որուն անորոշ և տարտամ պատասխանները ստանալէ յետոյ, Հոկտեմբ. Նին Գահիրէ կը վերագառնայ, աւելի մօտէն դէպքերը ստուճնասիրելու, բացատրելու և հասկնալու, ըստ այնմ նոր ուղի մը գծելով՝ ծրագիր մը պատրաստելու գիտումով:

Շատ բնական և բացայայտ էր որ Տիար Թորոսեան Յունիսէն մինչև Հոկտեմբեր ամբողջ շորս ամիս, և մինչև այսօր ալ վեց ամիս և աւելի, միայն Պատ. կարգ. Մասնախմբին որոշած ու տրամադրած երեք կամ չորս ոսկիներովը չ'պիտի կարենար բաւականանալ. սակայն այս մանրամասնութեանց մէջ թափառիլը՝ ո՛չ միայն ներկայ աշխատութիւնը չափազանց ստուարացնելով անոր հրատարակութիւնը պիտի դժուարացնէր, այլ և կարգ մը նկատառութեան արժանի նորանոր խընդիրներ ալ պիտի ստեղծուէին, որոց հոգը՝ մեր հասկցած ինքնապաշտպանութեան եղանակաբառնալու համար, դժբաղդարար ո՛չ ժամանակ, ո՛չ միջոց և ոչ ալ մեր առողջական արդի քայքայեալ վիճակը պիտի ներէր:

վերոյիշեալ ժամանակամիջոցին մեջ Տիար Թորոսեանի անձնական ֆապիկն ծախսուած աչք ձեռնարկին հաւար:

**Գ Ա Ն Ձ Ո Ւ Մ Ն Ե Ր**

Հին պահանջէ գանձուած Հարարէն՝	
Տ. Մ. Թեւրեանի միջոցաւ	385 75
Նոյնպէս       »       Մ. Պէյ	385. 75
»       հին պահանջ Զէշնէն	60
»       միջոցաւ Տ. Յ. Փ. Ի Զակաղիկէն	180
»       Թանթաէն զանազաններէ	160
»       Աղէքսանդրիայէ       »	1350

**Փ Ո Ւ Ս Ա Ռ Ո Ւ Ս Ի Թ Ի Ի Ն Ն Ե Ր**

Գահիրէի Կարգ. Մասնախմբի Ս. Նախագահին յանձնուած գանձումներէն՝ Ի ձեռքն Տ. Գարեգին Պանյաւի.	100
Աղէքս. Կարգ. Մասնախմբին որոշմամբ՝ անդւոյն գանձումներէն	320
Փոխառութիւն Գահիրէի Կարգ. Մասնախմբէն	292 50
»       Գ. Տամկանեանէ ( որուն 300ը միայն վճարուած է )	500
»       Ուրիշ անձնաւորութենէ մը	1072 50
»       »       »       »	97. 50
Գոյքերու վաճառումներէ	430
Գրքերու       »	675
Գրաւով փոխառութիւններէ	390

Անձնական պատասխանատուութեանս սակ եղած զանձոււմներէ

Ս. Դաւթեան	200
Ս. Խոջատուրեան	40

---

Գ ու մ ար       6318

Ի բաց առեալ եղած գործի և ժամանակի ամենակարևոր զոհողութիւնները, վերոյիշեալ ցուցակի գումարին 3) 4ը ծախսուած է երթևեկներու պանդոկի, թղթակցութեանց, կառ. քի, թրամպէյի, 40 ժամադրութեանց, գործին երարերեալ գընումներու, տպագրութեանց ևն. ևն:

Այժմ՝ վերադառնալով կարգ. Մասնախմբի հրատարակութեան տուած նամակին ան կէտերուն թէ՛ «Սրբազանին հրաւիրանօք Մասնախումբ մը կը կազմուի,՝ կատարելապէս ճիշդ չէ: Արդարեւ սրբազանը իր հաւանութիւնը յայտնած է անուանուած անձերուն վրայ, սակայն Տ. Թորոսեան ալ կերպով մը իր աւանդապահի ու Քարտուղարի կրկնակի իրաւասութիւններովը այդ հաւանութեան համազօր խորհրդականն ու գործադիրը եղած է, ի հարկին՝ ի յարգանս համակերպելով անոր որոշմանց և զանազան վայրերու մէջ գտնելով ու ստորագրել տալով ընտրելեաց:

Առաջարկեց (այստեղ համարուած է) ան ինքնաբերաբար կը հրաւիրէր զանոնք, օգրտաւոր զ... Բաշտիմեզ... Կոնստանդնուպոլիսէն ելնալու հար, և եթէ բաւական չ' համարէր Մասնախմբի անդամաց միջոցնեզը նմանօրինակ կարելոք ձեռնարկ մը ի գլուխ հանելու գործին մէջ, նոս



ուժեր կը հրաւիրէր՝ այն ատեն ըսելիք չէր Ֆնար-  
Սակայն Ս. Նախագահը այդ օինական գործու-  
ղութիւնները լրացնել չ'ուզելէն զատ, միշտ  
գրեթէ՝ տեսակ մը անընդունելի, վիրաւորիչ և  
անտեղի կասկածանքներ արտայայտելով կը վե-  
րաբերուէր գործին հանդէպ, հաւատարիմ աւան-  
դապահին անձնական բազմաթիւ հակառակորդ-  
ներուն կողմէ գաղտնի և յայտնի եղած նպա-  
տակաւոր թշնամանաց ու շարամտօրէն յերիւրած  
ասուլիսներուն կարեւորութիւն ընծայելով՝ և ըստ  
այնմ վարուելով անոր հետ, այնպէս որ՝ այս  
վերջինը — Թորոսեան — այդչափ անիմաստ, ան-  
տեղի յայտարարութիւններ լսելէ՝ և իրեն վա-  
ղեմի բարեկամ Գեր. անձնաւորութենէ մը սըր-  
տայօջ վիրաւորանքներ կրելէ յետոյ, ստիպ-  
ուեցաւ եզրակացնել թէ՝ ուղղամտօրէն իր բա-  
պառած թանկագին ժամանակը և վերապահելի  
ուժերը բարեացակամ ձեռքերու մէջ դրած չէ  
տարաբազդաբար. իսկ միւս կողմէ ինչ ինչ փա-  
փուկ պարագաներու մէջ նշմարեց ակնյայտնի  
թէ՝ անոնցմէ ոմանց վերաբերումը բացայայտ  
կեղծիքով խառն և թշնամական իսկ է. ուստի  
ինք ալ սկսաւ կասկածիլ և ւապագայ խայտա-  
ռակութենէ մը խուռափելու համար, հարկ եղած  
ւներկայ զգուշութիւնները ձեռք առնել, անհու-  
նօրէն և դառնապէս ցաւելով իր կողմէ տարա-  
պարտուց նուիրուած ա՛յնքան յոգնատանջ ու

անբերելի զոհողութեանց և բազմաչարչար տըք-  
նութեանց վրայ : Եւ այն՝ յօգուտ ազգին :

Գալով հրաժարականի խնդրոյն՝ քանի որ  
Մասնախումբի կազմութեան ձեւնարկը վերոյիշ-  
եալ օրինական ձեւակերպութիւններէն անցած չէր  
և գրեթէ միշտ տեսակ մը անկերպարան ու ե-  
րբեքալ տատանեալ վիճակի մէջ պահել ուղուած  
էր, այն ատեն Մասնախումբի կազմութեան հրա-  
ժարականի մատուցման և ընդունելութեան ի-  
րաւասութիւնները հիմնական փոփոխութիւն մը  
կը կրէին, և հարկ անհրաժեշտ կը դառնար բո-  
լոր անդամոց, որպէս զի իրենց հրաժարականը  
« կարեւոր » ընդունուած հեղինակութեան աւան-  
դապահ պատասխանատուին ուղղեն, և այն ալ՝  
ո՛չ թէ յերկրում բամբասանքներ փսփսալով  
անոր ու ասոր ականջին, և չարակամօրէն ու ա-  
նուզիկ միջոցներով հրապարակին դիմելով՝ որով-  
հետեւ այդպիսի բազմամախոս գործ մը վերջապէս  
հայութեան պարտքն է այս կամ այն եզանակաւ  
դիրարցնել : Վասն զի Հայաստանի բոլոր հայ նա-  
հատակաց յիշատակին ձօնուած է այն՝ ու հրա-  
պարակին օժանդակութեամբը պիտի աւարտի :

Գոնէ այս ու ասոր նման ազնիւ նկատում-  
ներով Մասնախումբը պարտ էր լռութեան մէջ  
գործել հրապարակային ցուցմունքներէ չի շլա-  
նալով : որովհետեւ կարելի էր որ Խորոսեան՝ ժա-  
մանակ մը ևս անոր հրատարակութիւնը յետա-

ձգելը յարմար դատէր ու այնպէս ընէր՝ ինչպէս  
ցարդ բրած էր . մինչ այժմ՝ ամէն գնով և նո-  
րանոր ո՞ գիտէ ի՞նչ տարապայման զոհողութիւն-  
ներով պարտաւորեալ է « ԱՔՍՈՐԻ ԿԵԱՆՔ » ին  
նման ամէն տեսակէտով իրապէս շահեկան հե-  
ղինակութեան մը ընթերցումէն չ'զրկել հայ  
ընդհանրութիւնը . բայց ինչո՞վ « Հիմայ Յարգ-  
մասնախումբը և պատուախոհներ » և քարտուղարը՝  
« ցուցամոլիկ և փառատենջիկ » , պիտի զգա՞ն  
արդեօք իրենց գործած այս անքաւելի բարոյա-  
կան սճրագործութեան մահահոտ ու ահեղացունց  
սարսուռը՝ երբ անոր — ոճրին — ոտակալի ուրուա-  
կանը խրոխտ ու աներկեան ընդ միշտ և ամենու-  
րեք՝ ի ժամու և ի տարածամու պիտի թեքուի  
իրենց հանդէպ :

Հա՞նչ է կրնել թէ ձեռք առնուած այդ ար-  
գել ու խորհրդատար միջոցը յայտնապէս մեծ  
ու անփոխարինելի զրկանք մ'է , այս պահուս  
մանտանգ՝ Տ . Թորստանին համար , և մահացու  
հարուած մը գիտակցարար անոր անմեղ կուրծքին  
ուզուած . իսկ այսպիտի հերսսային քաջագոր-  
ծութիւն մեր մէջ՝ իբր առանձնաշնորհ՝ Կարգա-  
գիր Մասնախումբերուն ու Յանձնախումբերուն  
տրուած կ'ըլլայ ստէպ , որոնք իմ շարաշար բազ-  
մամեղութենէս՝ աւա՞ղ . . . , ընդհանրապէս և  
միշտ « պատուաւոր » անձերէ բողկացած կրլլան .

— ականջը խօսի « Ազատ-Բեմ » ի 31 թուով Գահիրէէն զրկուած թղթակցութեան անանունն եւ անստորագիր պատուաւոր՝ բայց դիմակաւոր դիւցազնին . . . Մարդ օղանը այդպէս քաջասիրտ ըլլալու է. եւ . . . Բայց այդ պիտիներ թող լաւ գիտնան թէ՛ Արգոսի աչքերէն բնաւ չեն վրիպիր իրենց բոլոր թաքուն ու անխոստովանելի նպատակները և կարգ մը գձուձ հաշիւները . . . :

Հրաժարականը գործին բուն պատասխանատուին պէտք է ուղղել ըսինք. — Մասնախումբի բոլոր անդամներն ալ՝ ինչպէս քիչ յետոյ պիտի յայտնուի՝ քաջ գիտէին զայդ. սակայն ձեռնածուրմութիւնը մէկ կողմէ և Տիար Թորոսեանը անյաջողութեան մատնելու համար անոր քաջութիւնն առջև խօշնդոտներ դիզելու և խրամատներ պեղելու մտածումը միտ կողմէ՝ զիրենք գրողեցին մամուլին դիմելու. որպէսզի Թորոսեան վարկաբեկի, անոր ուժերը անդամալուծին, գործունէութիւնը սահմանափակուի ու ի հարկին ալ իբր զո՛հ ծառայէ . . . և այդ կարգի հրատարակութեանց սրտովին համոզուողնեղ մեր հայերուն մէջ շատ . . . առանց բուն իրողութեան իրողէկ ըլլալ ջանալու եթէ այս վերջնութեւնը պատակաւ չէր այդ շարժումը ու Մասնախումբը իր պարտականութեան անդիտակ էր, ինչո՞ւ նոյեմբերի սկիզբները Տ. Գարեգին Պահլաւ յատկապէս Տիար Թորոսեանը պառ ջր չ'Աւերի՛հ հրա-

ւիբեց և բերանացի յայտարարեց թէ՛ Կարգ .  
Մասնախումբը խմբովին հրատարած է ևն . Վի-  
կնոյն ժամանակ բաժանորդաց միտքը երևա-  
կայական առարկութիւններով պղտորել ջանա-  
լով, որպէս զի այլ և այլ պատրուակներ բռ-  
նելով նիւթապէս չ'օգնեն դործին . Այսպէսով  
թէ՛ Թորոսեանի անհատական դործունէութիւ-  
նը և կաշկանդուած յ կ'ըլլար՝ ինչպէս յայտարար-  
ուած էր, թէ՛ միաժամանակ ազգասիրաբար աբ-  
դելք հանդիսացած կ'ըլլային ազգօգուտ հրատա-  
րակութեան մը լոյս տեսնելուն, որու նմանը  
հարիւրաւորներ պէտք են հայուն՝ ազատութեան  
լուսաշող արշալոյսը ողջագուրելու համար .

Տիրար Թորոսեանի հրատարական ընդունելու  
կամ մերժելու իրաւասութեան սահմանները ճշ-  
դելու համար՝ վերի յիշատակութիւնը և Մաս-  
նախմբի անդամոց ոմանց կողմէ յարուցուած  
անհատական արդելքները բաւական են կարծենք՝  
և կը սիրենք յուսալ թէ՛ Տ. Պահլաւ չ'պիտի զիջա-  
նի ուրանալ այս իրողութիւնները, թէև ուրա-  
ցումն ու ստութիւնը քաղաքագէտներու (!) փրկա-  
գործ զէնքն է ըսած են .

Ուրիշ պարագայ մը ևս, Յարգելի Քարտու-  
ղարը ինքզինքը հակասութեան մէջ կը ձգէ նա-  
խապէս յայտարարելով թէ՛ Մասնախմբի ան-  
դամները հրատարական կը մատուցանեն սրբա-  
ղան նախագահին, ու յետոյ երկու տող վարը

հրաժարման այդ ձևին չ'հաւնելով կ'երևի, բացատրութեան եղանակը կը փոխէ՝ ու կ'ըսէ. « Մասնախումբը բողոքովին կը լուծուի. » արամաբանութեան այս գլուխ գործոցը չենք գիտեր յիշեալ դրքին ո՞ր էջին վրայ կարելի է զետեղել իբր հրաշակերտ մը տրամաբանական օրինաց, այդ նորօրինակ գիւտին ի վարձատրութիւն ոսկի միտալ մը ստանալու յուսով. ու յետոյ՝ թէ մասնախումբի անդամները իրենց հրաժարականը մատուցած լինցած են, խնդիրը դարձեալ կը սահմանափակուէր Ս. նախագահին և Բարաք օբամայի ինքզինքն ի համարողին միջև. Այլ ի՞նչ կարիք կը մնար օձագալար միջոցներու Բացատրութեան այս խառնափնդոր եղանակներէն յայտնի կ'երեւայ թէ՛ Տիար Պահլաւ խողովակը (պօրու) եղած է, որուն մէջէն Ս. նախագահը իր հրահանգները ու երկնային պատգամները կ'որոտայ. Ո՞վ Պուտտայի միամիտ հետևողներ. լսեցէ՛ք թէ աշխարհի մէկ անկիւնը ի՞նչ հրաշքներ կը գործուին. . . .

Յետոյ « նկատելով որ, կ'ըսէ յարեղի Քարտուզարը. անկարելի պիտի լինի Տ. Ե. Թորոսեանի հետ ՀԱՄԵՐՍՏԻՑ գործունեութիւն մը ունենալ այսպիսի կարեւոր ձեռնարկ մը ի գլուխ հանելու համար ելլել. »

Վերը յիշեցինք արդէն թէ՛ ա՛յնպիսի կարևոր միջագէտ մը տեղի ունեցաւ Սեպտեմբեր

ամսոյ մէջ, սր հարկ անհրաժեշտ դարձաւ Աւզէքսանդրիա իսկ բաժանորդագրական գործողութիւնները դադրեցնել, իրողութիւնը անմիջապէս ծանուցանելով Գահիրէի սրբազան Նախագահին, որուն հաւանութեամբ յատկապէս Աւզէքսանդրիա զրկուած էր Տ. Թորոսեան:

Միջադէպ ըսածնուս մանրամասնութեանցը մէջ մտնելու հարկ չենք տեսներ. անոնք արդէն անցած են պատմութեան կողմը, և լաւագոյն է որ առ այժմ մեզի վերապահուած մնան. այս սովոր բաւ է միայն ըսելը թէ՛ հանգուցեալ Տ. Աւստինք Եպս. Շիշմանեանի՝ գիտութիւնը նախագասելէն, ազդին իրական օգուտը ամէն բանէ՛ մանաւանդ ( աւստինք փառացս անցաւորի . . . ) ինքնակոչօրէն ազնուացած դասակարգին մենաշնորհ դարձած փառամոլութենէն, պերճանքէն և շահախնդրական ձգտումներէն գերիվեր ըմբռնելէն, ուղղամտութենէն, ազատամտութենէն, և սանկ րիչ մը՝ աշխարհականի պէս իր մտածման թռիչքը սքեմական տամուկ ու մքլոտած մթնոլորտէն դուրս ու բարձր տեղեր սլացուցած ըլլալէն կը յառաջանար . . . :

Օ՛հ. այս կարգի լուսածաւալ մարդոց համար թշնամիները խոտի պէս կը բուսնին . . . անարգ քսութիւններու. վայրավատին բամբասանաց, մոլորեցուցիչ զրպարտութեանց, չարանենդ մատնութեանց, չարչարանաց ու խաչելու

Թեան միակ առարկան է այն : Ու մտածել թէ՛ Յիսուսի յեղափոխական քարոզներէն ց'այսօր 20 դարեր հոլոված են , և ներկայ վերջինը՝ որուն « Լուսոյ դար » անունը տալ կը ժտինք , մենք մեծաւ մասամբ անոր ամենէն խաւարչտին անկիւններուն և աննշ-հարեւի խաւերուն մէջ կը դեղերինք տակաւին . և ինչ որ յառաջդիմութեան , զիտութեան , շոյսի և ազատագրութեան կը պատկանի՝ յաճախ անզիտակցաբար՝ մեր դաշոյնները կը սրենք դէպ այն ուղղելու անմուր ըսպառնալիքով և հակառակ պարագային մեր սովորական զէնքին կը դիմենք . այն է՝ թշնամանել , անդոսնել և զրպարտել . իսկ ինչ որ ասոր հակառակը սերտօրէն խաւարի ու տղիտութեան շղթային զարնուած է անքակտելի , նա մերն է մենէ բաղմաց սիրոյ և համակրանաց առարկան է՝ եթէ հարկը այնպէս կը պահանջէ . մեր պատելին է ու ամէն ինչն է՝ սրտագին և գորովալի վայրկյանքներուն արժանի : Ահա իրողութիւններու այժմէական ողբալի կացութիւնը , որուն վրայ խորապէս ցաւելէ անդին ուրիշ բան կարելի չէ ընել , և միանգամայն Խորենացիին հետ « ողբամ՝ զքեզ հայոց աշխարհ . . . » ըր դարեր յետոյ անգամ՝ մ'ալ եղերերգել :

Ինչպէս կ'երևայ, Գահիրէի Գեր. անձնաւորութիւնն ալ ակնարկուած պատահարին աղղե-



ցութեանը տակ ինկած էր, եթէ ուրիշ վերապահեալ անձանօք պատճառներ զոյսութիւն չունէին, և միջոցներ կ'որոնէր խոյս տալու իր ստանձնած նախադահի պաշտօնէն, ներքին պարագաներու մէկ մասին խորին զգուշաւորութեամբ (իմա՛ կասկածատու ձեականութիւններով) տեղեկանալէ յետոյ — առանց խօսքկապի նշանաւք. ինչո՞ւ չէ. . . — միաժամանակ պարզ հրատարակութիւններու միջոցով ամէն նիւթական և . . . բարոյական պատասխանատուութիւն ծանրացնելով Տ. Թորոսեանի վրայ. Քաջ զիտնալով հանդերձ թէ՛ Թորոսեան այդ գործին պատասխանատուութիւնները առանց ուրիշի մը հրահանգին սպասելու, ինքնաբերաբար արդէն իսկ ստանձնած է, և պռոտախօս՝ բայց առաջին քայլին իսկ ընկրկիլ զիտցող դասալիքներէն ալ չէ :

Ս. նախադահի խօսափումներուն վարպետէ հնարուած միջոցներ չ'էին պակսեր արդարեւ. բաց դռներ շատ ու շատ կային. Ուստի օրին մէկը աւանդապահ ինֆզիմիք հանարող Տ. Թորոսեանին կ'առաջարկէ որ ձեռագիրը յանձնէ, կամ ընթերցման տայ, որպէսզի գոնէ այն տեղէն պատրուակներ ստեղծել կարողանայ. և կամ՝ միանգամ ընդ միշտ, ո՞վ գիտէ, Տիար Թորոսեանը կերպով մը զրկել աւանդապահ ըլլալու իրաւասութիւններէն . . . :

Բնականաբար Տ. Թորոսեան, ըստ հրահանգի  
Գեր. հանգուցեալ հեղինակին, եղած առաջարկ-  
ները չ'պիտի ընդունէր, քանի որ շատ գերազանց  
պատճառներ ունէր մտածելու որ՝ այդ նուի-  
րականութեան « աւանդապահը » ըլլալու իրաւա-  
սութենէն զրկուելու պարագային, հեշտիւ կա-  
րելի պիտի ըլլար իր ճակտին դրօշմել ա'յնպիսի  
որակական մը՝ արդէն պատճառաւորաբար և որոճաց-  
ուած, զոր ո՛չ թէ իր ճակտին՝ այլ նոյն իսկ իր  
ոտքին եղունգներէն մէկուն վրայ չ'կրելու հա-  
մար՝ Տիար Թորոսեան ամենայն սիրով և յօժա-  
րութեամբ իր կեանքը պատրաստ էր տալու . . . :

Կ'արժէ աւելցնել թէ՛ վերոյիշեալ ձեռագ-  
րին շուրջ քանի մը ամիսներէ հետէ՝ լուրջ հա-  
մարուած անձի մը կողմէ և միջոցաւ զրոյց տա-  
րածուած էր թէ՛ Տիար Թորոսեան յիշեալ ձեռա-  
գիրը քանի մը հարիւր ոսկիի փոխան վաճառած  
է . . . թուրք բաշայի մը :

Յուդայի երեսուն արծաթը . . . և մենք  
քաջ գիտենք թէ՛ որո՞ւ գրպանը կրնայ ընդու-  
նիլ՝ բացի Ե. Թորոսեանէն՝ այդպիսի անարգ մա-  
մոնաներու կտորուանքները . . . :

Արդի ազգային խռովայոյզ ճգնաժամին մէջ  
մանաւանդ՝ ամենէն դառնաստուեր փոփոխու-  
թիւնը աչքառու և մերկապարանոց վիճակի մատ-  
նուած՝ կը նկատուի Հորիզոնի յարատիւրիս և  
րեոյթներուն մէջ :

Երկսայրի նոր մեթոտն է այն՝ որ ամենէն շատ քչուած ապրանքի և բանուկ արհեստի մընման հրապարակը կ'ողողէ . — ուրիշին արժանապատուութիւնը գործունէութիւնը, ձեռներիցութիւնը, իրական արժանիքը՝ առանց լիզճահարութեան և առանց տմօթի թեթեւ գունափոխութիւն մը զգալու իրենց երեսին վրայ՝ ուրանալ սքողել և մրտտել, աննպաստ տարածայնութիւններ դարձնելով ենթակային շուրջ, անոր բարի տրամագրութեաններու և ազնիւ ձեռնարկներուն դէմ դաւեր ու դարաններ լարելով կասկածելի ներկայացնելու փորձեր ընել, անոր ու շատերու կողմէ ալ նուիրական համարուած գործ մը շիւղ հայեացքով դատել ու տգեղ գայներու տակ ներկայացնելու ջանալ, և վերջապէս՝ ուրիշները ըստ կարի փոքրել՝ ինք մե՞նծ, աղգասէր և նոյն իսկ կարծիր յեղափոխական ներկայանալու համար յաչս միամտաց և երկայնամտաց . . . !

Նիւթապէս և բարոյտպէս փնասե՞լ կուզուի երրորդի մը միջոցներու մէջ ընտրութիւն չկայ ամէն խնդիր իրենց նկարագրի աստիճաններէն չտփելով ականջներէ կը փափսան « մատնիչ », « մատնչային » և ասանց նման ազտոտ բառեր. ու ահա դէպքերը հիմնական փոփոխութիւն կը կրեն . հոգ չէ թէ այդ փափսուքը անհիմն և մաացածին ըլլայ իսկ անոր հնարիչը՝ անչուշո

դո՛հ իր գործած աւերածներէն՝ անկիւն մը քաշուած այլոց միամտութիւնը շահագործել կրցած ըլլալուն վրայ ծիծաղելով ինքնիրեն կ'ըսէ . « արդ անձն իմ . կե՛ր, ա՛րբ և ուրախ լեր ... » :

Ահա իրաց արդի տխուր վիճակը՝ որուն համար մխիթարական բառ մը իսկ չենք կրնար ունենալ մեր շրթանց վրայ :

Պալով վերը յիշուած տարաձայնութեան կարելի էր որ նպատակաւոր ալ եղած ըլլար . մեզի անծանօթ է . Վիդթոր Հիւկոյի հոյակապ երկասիրութիւնը « Թշուառները » կարդացողներ, հարցաքննիչ դատաւորի մը սրամտութիւնը ապացուցանող օրինակի մը կը հանդիպին հոն, զոր զրի առած է նշանաւոր հեղինակը՝ նմանօրինակ ծուղակներու մէջ իյնալէ զերծ կացուցանելու համար իրեն յետագայ բանիմաց ընթերցողները :

Ահա այդ հատուածին մօտաւոր իմաստը, եթէ բուն հատուածը արտագրել կարելի չէ, « Թշուառները » այս պահուս ձեռքի տակ պատրաստ ունեցած չ'ըլլալնուս համար :

Իրամանենդ մը կը ձերբակալուի և հարցաքննիչ դատաւորին ատեանը կը հանուի, որ հակառակ ձեռք առնուած բոլոր ամենաազդու միջոցներուն, իր շարագործութիւնն ու օրինազանցութիւնը ուրանալով կ'ուրանար :

Դատաւորը փորձառու արդարեւ՝ ու միանգամայն խորամանկ մէկը, դրամանենդին հոմանունէին կը կանչէ և հարցաքննութեան ընթացքին մէջ ա՛յնպիսի ուղղութիւն մը կը բռնէ, որ վերջապէս Սւայի այդ տկար ու նախանձոտ թռուան կը հասկցնէ կերպով մը թէ՛ իր դրամանենդ հոմանին շատոնց ի վեր ուրիշ մը կը սիրէ:

Կինը կը զայրանայ ի լուր այս զեկուցման. նախանձի անյադ բայց սպառող որդը իր սրտին սիրամբարձ սիւները կը խորտակէ. տռփանք ու տարփանք թրթռացնող սրտի լարերը կը կտրտին, ու ահեղ բարկութեան մը կուրացնող վայրկեանին մէջ իր դրամանենդ հոմանիին բոլոր դադտնիքները կը մերկանայ դատաւորին . . .

Դատաւորը անշուշտ ուրախ իր բանիմացութեան և հնարամտութեան վրայ, օրէնքին տրամադրած ամենախիստ պատիժները կը տնօրինէ դրամանենդին և անոր ընկերներուն նկատմամբ:

Այսօրինակ նախընթաց մը կարի հրահանգիչ կը դանէ Տիար Թորոսեան, և Աքսորի Կեանքսին շորջ մինչև այն ատեն անցուդարձ ընող բոլոր դէպքերը, պատահարներն ու խնդիրները խորազըննին ուսումնասիրութենէ մը անցնելէ, և վերջին անգամ մը ևս զանոնք տողանցաբար իր մտքին առջև շարելէ յետոյ:

Ահա անհամերաշխութիւն ծնուցանող պա-

րադայ մը, որ յարգելի քարտուղարը նկատելի  
անհոգութեամբ մը կը մոռնայ ուշադրութեան  
առարկայ դարձնել և իր հրատարակութիւններուն  
մէջ մեր ի վերև յիշատակած գիւանագիտական  
հովերուն կամքին կը յանձնէ անխնայ, տերևա-  
թափ ծառի մը դեղնորակ ու ազազուն մէկ  
թերթիկին նման քշելու և անհետացնելու հա-  
մար իսպառ . . . անհունութեան ո՛ր դիտէ ո՞ր մէկ  
լայնածաւալ անկիւնը աննշմարելի՝ մուացութեան  
անչափելի խորափխտին անյագ կլափին մէջ . . . :

Եւ միթէ այս ւ անհամերաշխ քործունէու-  
թեան գլխաւոր և հզօր պատճառներէն մին կարե-  
լի չէ՞ նկատել՝ ի մէջ այլ բազմաց՝ Պ. Քարտուղա-  
րին այն հրապարակային խոստովանութիւնը թէ՛  
ւ սակայն սոյն Մասնախումբը, բաժանորդագրու-  
իւեան տետրակը ստորագրելէ անդին դեռ ո՛չ  
մի այլ գործնական քայլ չ'առած կը մատուցա-  
նէ իր հրատարականը . . . :

Զարմանալի չէ՞ Օգոստոսէն մինչև նոյեմբեր  
չորս ամիս կարգ. Մասնախումբի պաշտօն ստանձ-  
նել՝ լոկ ուրիշի մը գրածին ներքև ստորագրու-  
թիւն մը ցուցադրելու համար : Բայց այս ալ  
ճշմարտութեան հետ չի հաշտուիր . որովհետև  
ինչպէս ըսուեցաւ, կարգ. Մասնախումբերը իրենց  
հարեանցի ու աննշան գործունէութիւնը ցոյց  
տուած են ւ Հետևեալ ցուցակը կը հաստատէ  
զայդ :

Ի ԳԱՀԻՐԷ Մ. ՆԱԽԱԳԱՀԻՆ ՅԱՆՁՆՈՒԱՄ  
ԳԱՆՁՈՒՄՆԵՐԸ

Թիւ.	Բաժին	Ամսաթիւ	Ան. Մակա.	դրշ.	գումար
10	1	Օգոստ. 23	Յար. Աշ.	40	
17	1	» 25	Եդ. Դա	20	
33	1	» 29	Կ. Պ. Գ.	40	100

ԱՂԷՔՍԱՆԴՐԻՈՅ ԱՐԺ. ՆԱԽԱԳԱՀԻՆ ԳԻՏՈՒԹԵԱՄԲ  
ԳԱՆՁՈՒՄՆԵՐԸ

Թիւ.	Բաժին	Ամսաթիւ	Ան. Մակա.	դրշ.	գումար
10	1	Օգոստ. 11	ՈՄԵ (Մ. Հ. Հ)	40	
12	1	Սեպ. 22	Թաթ. Պար.	40	
14	1	» 29	ՈՄԵ (Լ. )	40	
63	5	» 14	Փիլիպ.	200	320

սոյն գումարները Պատկարգ. Մասնախումբերու հաւանութեամբ և որոշմամբ նախնական ծախքերու յատկացուած են .

Ի Գահիրէ՝ ձեռնարկին հետ յարաբերութիւն ունեցող Յիլիպէէն (Պուլկարիա) հասած նոր տառերու ազսպրանքի մը փոխարէնը Քրէտի Լիւնէին վճարելու համար Տ. Թորոսեանի անձնակրան պատասխանատուութեան ներքեւ գանձուած են հետեւեալները՝ անվերապահօրէն իրողութիւնները բացատրուելով վճարող բաժանորդաց .

Թիւ.	Բաժին	Ամսաթիւ	Ան. Մակա.	դրշ.	գումար
49	5	Հոկտ. 23	Սե. Դաւ.	200	
22	1	» 27	Սի. Խաչ.	40	240

ԱՆՑՈՂԱԲԱՐ — Ըստ նախանձաքեկ ցանկութեան Տր. Կ. Փաշաեան « Հորիզոնի » ԹԱՓԱՌԻԹ ին՝ իբր կադանդի նուէր գրպանեջ սոյ կուզեիմք վերոյ 660 ի ՊԼՏԿԱՌԵԼԻ գումարը . ( Հորիզոն 13 Յուն. 45 Թ. ) բայց . . . :

Այս գանձումներու տուրեւառին ժամանակ կարգ. Մասնախումբերը աղնուաբար նկատի առած էին արդէն թէ՛ երեւութապէս եղած ծախքերուն հետ բաղդատելով կատարուած գանձումները շատ նիհար են, ու անբաւական գործը քալեցնելու միւս կողմէ՛ շատ չ'պիտի տեէ որ Թորոսեան նիւթական տարապայման հոգերով ալ պաշարուած չարչարուի, որուն անխուսափելիօրէն պիտի յաջորդէ իրաւացի ընդվզումը:

Ասիկա գործունէութիւն չէ՞ միթէ. ինչո՞ւ Տ. Գ. Պահլաւ չ'ուզեր նմանօրինակ մանրամասնութիւններու մէջ մտնել, ու յանուն Մասնախումբին մէկ երկու անհասկնալի և խուսափողական բառեր նետելով ընթերցողին երեսին՝ կը բաւականանայ, անկարելի նկատելով Տ. Ե. Թորոսեանի հետ համեմատելի գործունէութիւն մը ունենալ:

Ի՞նչ պիտի հասկնանք սակայն սաւահանութիւն գործունէութիւն րառէն. զրկա՞նք. զոհողութիւն. միակողմանի համակերպութիւն. աստիցմէ ո՞րը. Համերայի գործունէութիւնը փոխադարձ վստահութեան, անկեղծութեան, և իրաւանց համահաւասար բաշխման մէջ կրնայ փրնտուիլ, արդեօք ի՞նչ աստիճանի զոհաբերութիւն կ'սպասէր Մասնախումբը «համերայի գործունէութիւն» պահպանելու համար. Յանձնուէ՞ր ձեռագիրը, և ի՞նչ ապահովութիւններով. քանի որ



Տ. Թորոսեան անկէ բաժնուելով կասկածելի պիտի ներկայացուէր յաչս հանրութեան, որուն հետ միշտ գործ ունի նա: Քրէտի Լիօնէ դրամատան զեկոյցներէն խուսափէր և քօթէսթի՞ զրկէր ընդ ամէնը 500 զոչնոց չէք մը, որ յանուն Մասնախումբի եղած ազսպրօնքի մը համար Թիւրիպէէն քաշուած էր Թամիրեանց-Ալեանաք տունէն Տ. Թորոսեանի հասցէին: Համերաշխ գործունէութեան սևուլիկ աշուկներուն համար քաղցած ու ծարաւի սպանէ՞ր յօրանջելով, որ պէտքի Պատ. Կարգ. Մասնախումբը կաշկանդուած համարէր Թորոսեանի անհատական գործունէութիւնը՝ և օրին մէկը խիղճը արթննալով « ապագայ խայտառակութենէ մը » ազատ մնալու համոզումով գործի ձեռնարկէր, խեղճ Թորոսեանին պապակը անցնելու և քաղցած փորը յագեցնելու . ս'ի հրաշագործ համերաշխութիւն. ականջդ խօսի . . . :

Գաղտնապահութեան դէմ մեղանշած չենք ըլլար ի ստորև հրատարակութեան տալով Թիւրիպէէն ստացուած նամակները, որոնք քիչ մը ևս կրնան լոյս տրուել Կարգ. մասնախումբին գործունէութեանը վրայ, որ « ներկայ » անպատեհութիւնը ոտեղծեց, « ապագայ » խայտառակութենէ մը » զերծ մնալու համար:

Կը խնդրուի որ նամակներու թուականներուն մասնաւոր ուշադրութիւն դարձուի:

Չուլարսևսեւ Տ. Յակոբ Մերունեանի նամակը

Փիլիպէ 27 Օգոստ. 1905

Մեծ. Տիար Ե. Թորոսեան

Էրզնիքէ

Ստացայ յարգելի գրութիւննիւ. կրկնակ շնորհակալութիւններս՝ դիւ Մասնախումբի անդամոց գոված ըլլալնուա... կամ թէ՛ « մաստուա » աւրած ըլլալնուա... Շիտակը Ձեր նախորդ գումանտին մէջ թերացած ըլլալս չեմ յիշեր կոր. այլ՝ հիմայ կ'իմանամ. բայց գիտէք թէ՛ ամէն մէկ արհեստի ամէն մէկ վաճառականութեան մէջ այդ տեսակ սխալներ կը պըրծնին երբեմն. ես վեց տարի առաջ — 1900 ին — Սօֆիայէն Գահիրէ ձեր թերթը առանց յապաղման սպազբելու ջանացած եմ. եւ մինչեւ իսկ Քօշկընկերով ուզածնիդ վայրկենապէս ղրկած, բայց չորս հինգ ամիս կայ որ « Արշալոյս » ի երեսը ցոյց տուած չ'ունիք. ես ո՞ր մասնախումբի անդամներուն գովեմ Ձեզ. ըսէ՛ք: (1)

---

(1) ՄԱՆՕԹ. Ե. Թ. — Ակնարկուած բուսականներուն մէջ. ինչպէս միևյեւ ցարդ. « Արշալոյս » չի՛ հրատարակուի, խնդրոյ առարկայ « Աստուի Կեանք » ի ձեռնարկին պատճառաւ:

Ձեր այս վերջին զօմանալը գրեթէ կուգայ  
80 քիւօ. զորս պիտի ուղարկեմ հասկէ Սեպտ.  
15 էն 18՝ բօսթի 6 զօլէթնեբով . կարձեմ շա-  
բաթ մը վերջ կը հասնի ձեռքերնիդ . մէն  
մի զօլէթի համար բօսթի պիտի վճարեմ 3 Ֆր.  
80 սանթիմ. մէկ քօլէթ պէտք է կշռէ 5 քիւօ.  
Եւ կամ եֆսրէսիթօն Kohn et Miltherի միջոցաւ  
կուսն վիքես պիտի ղրկեմ. վերջապէս ամէն պա-  
րագայի մէջ ՄԻՆՁԵՒ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ ՎԵՐՋ ձեռ-  
քերնիդ կը հասնի, եւ որպէսզի քօլէթին վրայ  
երկար բարակ անուններ . . . ածականներ չ'դըր-  
ուին — միջոցը պզտիկ է չի բուեր — ( մասնա-  
խումբի « Իերապատիւ տեճնաւորութիւնը » կը  
այննարկէ ) ուղղակի « Արշալոյս » յի անունին պի-  
տի ղրկեմ. ալ դուք պէտք եղածը — դրամական  
տեսակէտով — կանխաւ անօրինեցէք:

Ընդունեցէք եւ ին,

ՅԱԿՈՒ ԾԵՐՈՒՆԵԱՆ

Ձեռագիրը Ծերունեանինն է, յանուն Թամիր-  
եանցին գրուած:

Ֆիլիպէ 24 Սեպտեմբեր 905

Պատ. Խմբագրութիւն « Արշալոյս » Լրագրի  
ի Գահիրէ

Ձեր յանձնարարութիւնը այսօր բօսթին  
յանձնեցինք որ է հետեւեալը:

Վերոյիշեալ գումարին համար ձեր վրայ

քաշած ենք մի չէք. ներկայանալէն 5 օր վերջ  
վճարելի. խնդրեմ հաճիք օրին վճարելու

Յարգանք

ԳՐ. ԹԱՄԻՐԵԱՆՑ

Յ. Գ. — Տիար Յ. Մերունեան պիտի զրէ  
մանրամասնաբար օ Գերապատիւ . . . անձնաւո-  
րութեան » թէ՛ զօլէթները խմբադրութեան  
ուղղուած են, որպէսզի Ն. Սրբազնութիւնը եւս  
ձեղ յանձնէ վճարելիք գումարը

ՆՈՅՆ

Մեր մէջ միշտ այսպէս եղած է արդէն. և  
հանրային գործերը այս ընթացքը ունեցած են  
յար. Օժանդակ Յանձնախումբերէն, Մասնախում-  
բերէն, կարգադիր մարմիններէն, թաղականնե-  
րէն և հօգաբարձուներէն ու քարձիկներէն ըս-  
կըսեալ մինչև վերին հսկողները—քաղաքական և  
երեսփոխանները կը կազմուին, ու ազամորդինե-  
րու խմբակներ վերոյիշեալ անունները կ'զգե-  
նուն, ալ կիսաստուածներ են անոնք. վա՛յ անոր  
որ իրենց օժանդակութեանը կը կարօտի. ենթա-  
կան իր էութիւնը. գոյութիւնը, արժանապատ-  
ուութիւնն ու սեփական զգացումները, ձեռնե-  
րիցութիւնն ու գործունէութիւնը, մտածելա-  
կերպը զո՛հ տալու է կիսաստուածներուն. աւա՛ղ

Պ. Քարտուղարը կը յարէ .

« Ուսի սոյն — համերաշխ գործունեութեան  
անկարելիութիւնը կ'ակնարկէ — և զանազան այլ  
նկատումներով՝ Մասնախումբը բոլորովին կը

շուժուի եւ նոյնի հրատարակման համար եղած քո-  
չոր գործառնութեանց հանդէպ հրատարեալ Մաս-  
նախումբը նիւթակաս եւ բարոյակասն ո՛ր եւ կ պա-  
սասխանասուութեանէ զերժ կը մնայ իսպառ. անձ-  
նապէս պասսախանասու քողով եղած զանձուննե-  
րու մասին Տիար Թորոսեանը, որովհետեւ Մասնա-  
խումբի կողմէ ո՛չ մէկ ընկալագիր կեֆուած կար-  
ասորագրուած է . »

Ուղղամտութեան հակառակ է և տրամաբա-  
նութեան ամենատարրական օրէնքներուն հետ  
իսկ ուղիղ չի՛ համեմատիր ըսուած խօսքերը . և  
եթէ կարելի է ըսել , աւելի շատ՝ խնդրոյն են-  
թական՝ — կրկնութիւն մը պիտի ըլլայ թէև —  
վարկաբեկելու և անգործութեան մատնելու  
անազնիւ նպատակաւ գործածուած նախադա-  
սութիւններ միայն կրնան նկատուիլ . մանաւանդ  
ա՛յն ատեն աւելի կասկածելի կ'ըլլան, երբ ա-  
ռանց սրոշ բացատրութեան հրապարակ կը դըր-  
ուին . ճշմարտութիւն և ուղղութիւն պարունա-  
կող բացատրութիւնները անոնք են , որ իրենց  
ստոյգ և իրաւացի փաստերը միասին ունին, և  
ընթերցող մտքերը շիփթեցնելէ հետի, կարծիք-  
ները իրենց ճշգրիտ ուղղութեանէն շեղեցնելէ  
զերժ , սւ անմեղ մը յանիրաւի զրպարտելու քմա-  
հաճոյքէն գլխովին ազատ են .

Տիար Թորոսեանը վարկաբեկել ճգնող Ռա-  
ցատրութիւնը » ( տե՛ս « Ազատ Բեմ » թիւ 34 և

« Հորիզոն » թի. 42 և այլն ) վերաբերեալ գատա-  
 պարտութեան ենթակայ կը մնան, քան թի քննա-  
 դատելի պարբերութեանց շարքէ մը յետոյ, լակ  
 կ'աւելցուի թէ՛ « ռուսի սոյն և զանազան այլ  
 նկատումներով մասնախումբը բոլորովին կը լուծ-  
 ուի » Ինչո՞ւ արդեօք պատճառաբանեալ հրաժա-  
 րագրերով չի՞ հրաժարիւր և կը լուծուի . . . , քե-  
 զապի հոտը տակաւին քիմն իսկ չի դպած . . . »

« ԱՌՅՆ » զուտաճը քաջատրուեցաւ արդէն  
 թէ՛ « կարևոր գործը » ի գլուխ հանելու համար ե-  
 զած կազմակերպչութիւն մը քայլ քայլելու բնու-  
 թենէն և զօրութենէն զուրկ էր . ի՞նչ են ուրեմն  
 զանազան այլ նկատումները՝ որոց մասին ալ ո՛ր  
 և է լաջատրութիւն տալ չ'հաճիր յարգելի բար-  
 տաւարը՝ լուծեալ (?) թէ հրաժարեալ կարգ-  
 Ա մասնախմբին »

Եթէ նիւթական խնդիրն էր, մասնախումբը  
 առաջուրնէ գիտէր թէ՛ ինք այդ դժուարու-  
 թիւնները բաճեալու համար պաշտօն ստանձնած  
 էր և միասին գործակցելով պիտի հալթալթէր՝  
 որպէսզի « կարևոր ձեռնարկը » ի գլուխ ելլէ՝  
 Երբ ձեռագիրը կարգալու կամ չ'կարգալու՝ յանձ-  
 նուելու կամ չ'յանձնուելու խնդիրներն էին, Տ.  
 Թորոսեանի կողմէ գրուած և իրենց հրաժեցուած  
 անն մը չ'պիտի ըլլար նիւթը, այլ՝ հանգուցեալ  
 բանիբուն, փարձառու և անձնուէր եկեղեցականի

մը կողմէ, որուն վրայ՝ տպագրութենէն առաջ կամ ետքը, բոլոր մը իսկ աւելցուելը կամ փոփոխուելը պարզապէս ռմբագործութիւն պիտի համարուէր: Միայն կը մնար ընագրին խօսութիւնը ճշգրտու խնդիրը. — մասնախումբը այս եպերելի միջոցն ալ իբր զէնք դործածած էր որովհետեւ — այս պարագան չբմեղելը շատ դիւրին պիտի ըլլար. բայց պէտք էր որ մասնախումբը այդ առնչին սպասէր հրատարակու, կամ իր թողոքը ա՛յն ատեն բարձրացնէր հանդէպ Տ. Թորոսեանի, երբ սա՛ այս հաստատումները լրացնելու և անտեղի կասկածները փարատելու անկարող ըլլար: Կ. Մասնախումբը օրինաւորութեան՝ սահմաններու մէջ դործած և իր յայտարարածները ճշմարիտ կրնային համարուել այդ պահուն, և պէտք եղած հաստատուն ապացոյցները ի ձեռին՝ դատապարտելութեան յանցանքովը կարելի էր խարանել աւանդապահը = իսկ այժմ՝ ո՛չ միայն այդ դատապարտելութիւնը ստութեան քողին ներքեւ պարուրուած ըլլալուն համար իրենց սեփականութիւնը կը մնայ, այլ և՛ մասնախումբն ալ՝ « դործը » սողմին մէջ ոչնչացնել ուղեւու կասկածելիութիւնը իր վրայ կը հագնի = նիժէ գիտէ նոյս կարմիր տառաշուկին ինչ ըլլալը... »

Այս ք կրնայ ընդունել ընականաբար թէ՛ ո՛ր և է կարգադիր մասնախումբ կամ մար ինն և կամ

անհաս մը, բացարձակ կամ սահմանափակ կերպով իրաւունք ունի ուրիշ անհատի մը կամ անհատներու գաղափարին կամ գործելակերպին վերայ բռնանալու, քանի որ մամուլի ազատութեան օգտակարութիւնը ընդունած ենք — մամուլի ազատութիւնը գաղափարներու ազատութիւնն է — քանի որ բռնութեան դէմ բողոքելու ատակ դարու և միջավայրի մէջ կ'ապրինք՝ Փա՛ռք Աստուծոյ. Սպանիական հաւատաքննութեան դժոխատեսիլ դարուն մէջ ծնած չենք։ Գաղափար մը ա՛յն ատեն պարսաւանքի կամ գովեստից կ'արժանանայ՝ երբ որ հրապարակաւ կը յայտնուի. գիրք մը կամ հրատարակութիւն մ'ալ ողջմտօրէն ա՛յն ատեն պէտք է քննադատել, գովել կամ պարսաւել՝ երբ որ հրապարակ կուգայ. հակակրօթեան և երեակայութեան ծնունդ ու այլազան նեղ ըմբռնումներով երեան դրուած գատողութիւններն ու դիտողութիւնները շատ անգամ կարեւոր գործ մը կամ ձեռնարկներ անյաշողութեան մատնելու խաւարածաւալ շարագործութենէն անդին ուրիշ վնասակար արդիւնք չեն կրնար արտադրել. և այդ ուղղութեան համակիր ինքզինքնին ցոյց տուողներն ալ պարզապէս միա՛միտ յետադիմականներ կրնան համարուիլ։

Հոս էր ահա Պատ. Կարգ. մասնախմբին մէկ կարեւոր սխալը. իրերը և գործելու սահմանները իրարմէ զանազանել չ'ուզեց. բաժանորդագրու-



Թեան մը վրայ հսկելու կամ բաժանորդները ստուարացնելու համար իրեն եղած կոչը ու իբր ատոր հետեանք ստանձնած պաշտօնը՝ շիտթեց կերպով մը Թուրքո-ուստական բռնարարող գրաքըննութեան հետ. երկասիրութիւն մը՝ որուն հեղինակը ո՛չ ևս է մանաւանդ, ժամանակէն կանուխ խճրճել ուղելը՝ սճիր է, իսկ անոր մէջ ո՛ր և է փոփոխութիւն՝ գերագրասպէս աններելի = Լուսաւորեալ բոլոր ազգերուն մէջ առ հասարակ ընդունուած կանոնը այս է. մենք պէտք չէ՛ որ բացառութիւն կաղմենք, քանի որ լոյս և ազատութիւն կը փնտռենք մեր արեան դնով :

Ամենէն գէշ պատրաստուած գիրքը անգամ իր բաղմագիծի օգուտները ունի՝ ըսուած է՝ նըրբամիտ և բարի տրամագրութիւններով օժտուած ընթերցողին համար. և պատճառ մը չ'ունինք հաւատալու թէ՛ հանգուցեալ ազգանուէր ճիշմանեան Եպիսկոպոս ալ՝ իր այնչափ տարիներ ծառայած ազգին համար, յոռի և ազգափրաս ներշնչումներ ընել մտածած ըլլայ իր « Աքսորի կեանքը » անուն երկասիրութեան միջոցաւ. Այսպէս հաւատալ ու մտածելն ալ թեթեւ մեղքերու կարգը դասել կարելի չէ. ուրիշ բան է թէ՛ հակիրութեան զգացումներէ կուրացած և անգիտակցութենէ մոլեալ խօսիլ ու գործել ուղէ մէկը :

Ղևոնդ Եպիսկոպոս՝ ըստ ոմանց՝ եթէ թե-

բութիւն մը կրնայ ունենալ, այն ալ՝ ինչպէս ըս-  
ուած է արդէն, թիչ մը կղերի այլևս հինցած, ան-  
ըմբռնիսնելի, մեռելակապուտ (\*) հոգետարութեանց  
մթնոլորտէն աւելի բարձր, դէպի ուղիղը և ճշ-  
մարիտը սաւառնելն է, դէպի իրական ազատու-  
թիւնն ու դէպի վերածնութիւն ճախրելն է. ա՛լ  
չահամոլ և փառասէր հակակիրնեքու գրոյի մը  
պէտք չէ՞ որ ստեղծուի իրեն դէմ, խռովելու  
համար իր գերեզմանին հանդիստը, երբ տարբեր  
հաշիւներ ալ մանաւանդ կը միանան անոր . . . .  
ուամիական առածը կ'ըսէ որ « շիտակ խօսողին  
դանկը ( քեդիեմ ) ծակ կ'ըլլայ » ( քսակը ըսելու  
էր . ) իսկ այդ շատ հին առածէն օգտուելով կամ  
փորձառութեամբ է անշուշտ որ Խտալայի քա-  
ջահմուտ բանաստեղծ « Լէօբարտի » զայն կակե-

---

( \* ) Գաւառներուն մեջ դեռ երկասունեակ մը սու-  
րիներ առաջ, հայ ֆահանսները իրենց ծուխերուն պս-  
կանոյ ննջեցեալին գոյժերը — անկողին . դրամ , եշն —  
կը գրաւեին ԿՈՂՈՊՈՒՏ անուանելով :

Հայ ժողովուրդին անուշ դասայարգը՝ որ ստուար  
թիւ կը կազմէր . կրօնական հաւատարեաց կարգը դասած  
էր պսն մը այս կողոպուտի ծիսակասարութիւնը եւ ոչ-  
խարստեան համակերպող շուրթիւն կը պահէր. Իսկ այ-  
ժըլ , շնորհիւ բաւարար զարգացման , կրցած է այդ ծե-  
սին արժեքը կշտադասել եւ ԿՈՂՈՊՈՒՏ բառը ըստ սեղ-  
ւոյն գործածել . այսինքն՝ հարստահարիչներու եւ աւա-  
զակներու արարքը որակել այդ բառով . . . .

լով, դարգարեւով հետեւեալ պերճախօս բացատրութեամբ մեզի կը ներկայացնէ ։

« Բարիները, վեհանճները միշտ ատելի կ'ըլլան, վասնզի ստորաբար անոնք են անկեղծները և ամէն բանի իրեն իսկական անունը տուողը ։ Այս յանցանքը աններելի է յաչս մարդկային ազգին, որ երբէք՝ ո՛չ չարիք դործողը այնքան կ'ատէ, և ո՛չ ալ նոյն իսկ չարիքը՝ որքան կ'ատէ անոր — չարիքին — անունը տուողը ։

Հանգուցեալ Ղևոնդ Եպիսկոպոս այս անկեղծ հոգիներէն մին եղած է իր երկասիրութիւնովը ։

Հանգուցեալ Շիշմանեան Եպիսկոպոս իր « Արտորի կեանք »-ը երկասիրութեան ընթացքին մէջ, կրօնի զերծ պաշտօնէից սմանց յոռի վերաբերումը, ղեզխութիւնն ու շուայտութիւնը, ազգատեցութիւնն ու շահամոլութիւնը կը ձաղկէ, զանոնք ի կաշոյ և ի զգուշութիւն հրաւիրելու ազնիւ դիտումով . մեղադրե՞նք իր այս անկեղծութիւնը . « Եթէ այն անհամեսցի՝ ի՞նչ հա՛ եմեսցի... » ։ Ո՛չ ապա բէն մեր ազգային իշխանութեան վերին ղեկավարութիւնը տարաբաղդաբար կրօնի պաշտօնէից ձեռքը մնացած է յայս վայր՝ Պէտք չէ՞ որ անոնք ալ՝ ըստ կարգի՝ իրենց բարոյական ու մտաւորական աշխատութեան ւզնիւ բաժինը ընծայ բերեն տառապեալ հայ ազգին, զօրացնելու համար վերածնութեան նուիրուած քրտնաջան

յոգնութիւնները ... Ինչո՞ւ շատ անդամ՝ ասոր հակառակին տխուր ականատեսներն ենք միայն. ինչո՞ւ հայ կղերին մեզի ծանօթ մեծագոյն մասը՝ իր դիրքն ու ազդեցութիւնը անխախտ պահելու ստորին մտածումով՝ գործածած միջոցներուն մէջ ընտրութիւն իսկ չի դնել, յաճախ, ու անոր ամբողջ մտածումը կը կայանայ լոկ իր հանգիստն ու խաղաղութիւնը բնաւ չի վրդովելուն մէջ։

Իսկ այս յանդիմանութիւնը միայն Նիշմանեան Եպիսկոպոս չէ՝ որ անկեղծաբար կ'ուզէ սեւասքեմ՝ մեղկացելոց . այդ բանը ժողովուրդին բանխմաց դասակարգն ալ զգացած է ի վաղուց և շատ անդամ կ'զբաղի անով։ Սպահով ենք թէ շատ չ'անցած այդ զբաղումին քանակն ու որակը պիտի փոխարկի սուր և ցնցող պայքարի մը։

Ուրիշ շատերու մէջ հոս յիշենք ծերունափառ հայ բանաստեղծը Սիմօն Ֆէլէկեան, որ իր Գահիրէ տպագրուած մէկ երկասիրութեան մէջ՝ դըրրդեցնող հարուածը կ'իջեցնէ կրօնի — այդ երբեմնի անմեքձենալի շէնքին — զեղծաբար պաշտօնեաներուն դէմին, և լըջօրէն մտածել կը թեւադրէ բարեմիտ — չ'ըսելու համար միամիտ — հաւատացեալները։

Ահա այդ սարսեցուցիչ տողերը, ոտ ամբարշտ կղերի մը մեղայագիրն է։

Մեզո՛յ քեզ մեզո՛յ Հայ Եկեղեցի .  
որ դու հիմն էիր սան մեր Հայրենի.

մէկ կողմ հրեշտակ, ու մէկ կողմ ալ մե՛նք  
Աստուծոյ տայի՛նք ամէն ժամ օրհնե՛րգ:

Աւխտ բրի Տէրոջ ես բլլալ ծառայ,  
մարդիկ խաբեցի ու կղեր եղայ.  
կը ձեւանայի պարկեշտ ամչկոտ,  
սուա կ'աղօթէի մինչև սառուտ,  
այս էր կղերին դործիք խաբերայ,  
խաբել զայն, որ դեռ՝ իրեն հաւատայ .  
վասնզի կրէ Աստուծոյ անուն,  
թէ ինքն «սաժ է Սուրբ փոխանորդութիւն,  
ինչ որ ալ բնէ, Սուրբ են գլխովին,  
ահա՛ կոյր հաւատք՝ խեղճ ժողովրդին.

Ամէն ոք կարծեց թէ Սուրբ մի եմ ես,  
երկինքէն իջած հրեշտակ լուսերես,  
երեսս էր սեւ, զայն ես դիտէի,  
այս իմ գաղանիքն էր, ու մարդու չ'ըսի.  
բրի ամէն բան անխիղճ անօրէնք  
բրի, զոր բնաւ չ'էր ներեր օրէնք .  
այսպէս կոյր մարդիկ ինձ հաւատացին,  
կին՝ մայր, ու զաւակ ամենք յանձնեցին.  
ինձ ըսին — Հա՛յր Սուրբ, եւ կամ Տէր Պապայ  
կամ Եպիսկոպոս, որ մէկն ալ բլլայ,  
կարծեցին թէ ես՝ մի փոքրիկ Աստուած,  
կ'երթան երբ « զացէ՛ք » ըսեմ ես լերանց,  
սկսայ պարել, ասպարէզս էր լայն.  
Եկեղեցւոյն տէրըն էի ինքնիշխան,  
ինքնին կ'ըսէի — թէ ի՛նչ է մարդ որ  
կրօնքէն մոլեալ, խաբուի ամէն օր :

Ես ալ մարդ մի եմ կամ բարի կամ չար,  
ի՞նչ հարկ հաւատալ ինձ վաստօրար.  
Ի՞նչ հարկ հաւատալ թէ, սքեմք սեւ  
խաւարը փոխէ կը շրջէ յարեւ.  
Գիտէ՛ սքեմին մէջը մարդ մը կայ  
տե՛ս իրօք մտ՞րդ է եւ կամ ստանայ.  
Թէ իրօք մարդ է՝ անոր մօտեցիր.  
Թէ իրօք մարդ չէ՝ անկէ հեռացիր.  
այս սեւ վեղարիս կամ խօյրօիս տակ  
գիտե՛ս թէ որչափ ստամն կայ՝ չիմակ.  
ով որ զիս օծեց մեզքն անոր ճիտին.  
Ղաբժանի շէի ես այս Սուրբ կարգին :

« Հորիզմնի » վերջընթեր թիւերէն մէկովը  
երիտասարդ գրագէտ Պ. Բարսեղ Շահագալ, իր  
խորհրդածուծիւնները աւելի խիզախօրէն առաջ  
կը տանի, և վերջապէս համոզում կը գոյացնէ  
թէ՛ հայ ազգին ազատութիւնը կղերին ազգե-  
ցուծիւնը եկեղեցւոյն մէջ սահմանափակելուն  
մէջ պէտք է փնտռել = Ասիկա ստոյգ է թէեւ՝  
« գեղատառ ուղերձ » ներուն տեղատարափէն ա-  
զատելու համար, բայց այս պայքարի յաղթա-  
նակին արդիւնքը վայելելու խնդիրը ոչ նուազ  
հեռաւոր է՝ երևայ. նախ որ բաւական զո՛ներ պէտք  
են, իսկ երկրորդ՝ կռիւը անհաւասար է թուով  
և քանակով. մանաւանդ թէ՛ կղերը իր կողմը ու-  
նի ժողովուրդին անհասկացողութիւնը — ապի-

տութիւնը չ'ըսելու համար Իսկ ամենէն վերջինը  
և կարեւորը՝ բազարական հանգամանքներն են ,  
որոնց գէպի այդ շաբթուօ մը նպատաւոր փոփո-  
խութիւնը կարի յամբաքայլ ընթացք մը ունի-  
Առ այժմ հիմնարկէ բ մը միայն բանաւոր համա-  
րելով, մենք ներկայ բանի մը ատկերով բուն նիւ-  
թէն կատարուած շեղումը հոս կը վերջացնեն ,  
հետադիպելու համար մասնախումբին գործե-  
րուն, որ մեր արդի նպատակն է, և որոց քննու-  
թիւնը որչափ առաջ տանին ք, նոյնչափ սրտե-  
նիս պիտի կ'եղեքուի՝ տեսնելով մեր հանրային  
գործոց միօրինակ ու անփոփոխ կայունութիւնը  
և տիրատեսիլ երեւոյթները :

Մասնախումբը՝ կամ իր կողմէ բարաւզարը,  
բառեղու հեռ կը խաղան ուրեմն, անորոշութեան  
մէջ մնալու սէրէն զինոյցած՝ յարելով . ուստի  
« սոյն՝ ևւ այլ գամաչան՝ նկատու լներով մաս-  
նախումբը յորոշովիս կը շուծուի . . . »

Կարգ. Մասնախումբը եթէ ըստ օրինի ար-  
ձանագրութիւն, կանոնաւոր նիստեր կայն չ'ու-  
նեցաւ , գոնէ մասնակի գումարումներ, արժեաց  
փոխանակութիւններ, որոշումներ և անոնց մաս-  
նաւոր գործադրութիւնները ունեցաւ . այս պա-  
րագան ընթերցող հասարակութեան աչքէն և  
գատողութենէն ծածկել շանալով լաւ գաղափար  
մը չ'կրնար կազմել տալ Կարգ. մասնախումբը իր

ճմարտասիրութեան վրայ • Գիտական պահանջումներու անհամաձայն ու խոհարարական պայմաններուն անհամապատասխան պատրաստուած կերակուր մը ստամոքսը կը խանդարէ, ու հետեանքը կարելի է գուշակել ... »

Աւելի վարը • հետեաբար նոյնի հրատարակման համար եղած բոլոր գործառնութեանց հանդէպ նիւթական և բարոյական ո՛ր և է պատասխանատուութենէ հրաժարեալ մասնախումբը զերծ կը մնայ խաղառ ևն. »

Արդարեւ հիմակ ա՛յնպէս պէտք է ընդունիլ • քանի որ՝ Կարգ • մասնախումբը ո՛ր և է միջոցներով և պատճառաբանութեամբ — եթէ հիմնովին հակասական ալ ըլլան անոնք — հրապարակ կը մտնէ և կը յայտարարէ զայդ • Աոոր հանդէպ Տ. Թորոսեան ո՛չ պէտք եղած ազգու միջոցները՝ և ո՛չ ալ մէկուն կամեցողութեան վրայ բռնանալու շորութիւնը և իրաւասութիւնը ունի, որպէս զի Կարգ • մասնախումբին տրամագրութիւններս ձեռնարկուած գործին նպաստաւոր ուղղութեան մը մէջ հրաւիրէ • բայց գոնէ իրաւունքը ունի իբրև ազգային անհատ մը, ինչպէս որ ունին ամէն ուրիշները, իր արժանապատուութիւնը վերաւորանքներու և անարդար խժժանաց տուարկայ դարձած չ՛տեսնել • և այս խնդրոյն մէջ՝ գէթ Պատ • կարգ • մասնախումբի անդամոց պարտաւորութեան սահմանին մէջ կը նկատուէր



այդ պարագան ուշադրութենէ չ'վրիպեցնել մարդասիրաբար, ընկերսիրաբար, և ինչ որ առաւելագոյնն է՝ աղնուաբար Աշխարհի ընթացիկ գործերը իրենց լազմանկիւն անիւններուն վրայ հռովելով այս կենտարար խրատը ջամբած են մարդկութեան. միթէ՛ անոնցմէ և ոչ մէկի<sup>ն</sup> հանդիպած էին կարգ. մասնախմբի պատ. անդամք, որ ելեր իրենց մէկ նմանը յանիրաւի գետնէ գետին զարնել կը փորձեն զանազան ձևականութիւններու կրթնած, այլևայլ պատճառաբանութեանց շլացուցիչ ուժին յեցած և թանձրացեալ ուղղամտութեան վարուգոյթին ներքև պատասպարուած :

Կարգադիր մասնախմբի կողմէ ո՛չ մի ընկալադիր կնքուած կամ ստորագրուած չ'լինելը բաւական կը համարուի նիւթական խնդիրներու մասնակցութենէն զերծ մնալու համար :

Ապաքէն կարգ. մասնախումբին անդամոց պատուաճանաչութիւնը ՝ կը ցոլացնէ սոյնիմաստ հրապարակային յայտարարութեան մը դիմել. մէկ քանի բաժանորդներու վերագրեալ վճարումներուն աւջև ինքզինքնին պատասխանատուութենէ զերծ կացուցանելու համար. սակայն ա՛յս ալ տրամաբանական չէ. որովհետև թէպէտ սա գիտակցութիւն արտայայտող զգուշութիւն մ'է պատուախնդիր ՝ անձերու համար և գոյելի, բայց այս պարագային՝ միակողմանի ուղղութիւն մը բռնե-

լու ինքզինքը տրամադիր ցոյց տալէ և մեղադրելի ըլլալէ ազատ չ'կրնար կացուցանել զինքը . որովհետեւ եթէ մէկ կողմէ նախապէս յիշուած հինգ վեց անհատներու նիւթական խիստ փոքր և մանաւանդ ենթացրական փաստուն պատճառ գառնալէ զգուշանալու հոգ կը տանէր, միւս կողմէ պարտական էր հոգածութիւն ցոյց տար փրկատրուելու և ճշդելու թէ՛ ի՞նչ չափով և քանակով պատասխանատուութեան ներքեւ կ'իյնար Տ. Թորոսեանի նիւթական փաստուց և զսհողութեանց հանդէպ . քանի որ իրենց կազմութեանն յետոյ, յատկապէս իրենց հրահանգով կը ճամբորդէ, ի հաշիւ մասնախմբին գնումներ կ'ընէ, իրենց յանձնարարութիւնները տպագրել, կուտայ, այլևայլ քանակով անձնական փոխառութեանց միջոցաւ դրամ կը հայթայթէ ձեռնարկը փափաքելի յաջողութեան մէջ պահելու համար . իր սեփական գործը կը զսհէ և սովորներով ժամանակ կ'սպառէ, հոս ու հոն կը վազէ, անհուն զսհողութեամբ գլուխ կը ծռէ, և այլազան նկատողութիւններու առջեւ համբերատար ու համակերպող լուրթիւն մը կը պահէ . և այս ա՛նհը՝ միայն և միմիայն կարգմասնախմբին և իր ստանձնած յանձնառութեանց հանդէպ ամօթապարտ չ'մնալու համար :

Այս ա՛նհուն նիւթական և բարոյական պատասխանատուութիւնը որո՞ւ վրայ կը ծանրանայ ուրեմն . ո՞չ ապաքէն կ' . մասնախումբը պար-

տաւոր էր ուրիշ ազգայիններու պատճառած կար-  
ծեցեալ վնասէն — որ խոկապէս վնաս մ'ալ չէ ,  
քանի որ Եզիչէն լաղ է — զգուշանալու ատեն ,  
ազնուարար խնայէր նաև Տ . Քորոսեանն ալ , որ  
միւսներուն նման ազգային անհատ մ'էր , տա-  
րիներով հայ ուսուցչական ապերախտ ասպարէզին  
դաւնութիւնները ճաշակած , քանի մը տարիներ  
ալ իր լրագրողի հանդամանքովը — ապերախտ  
քան զառաջինն — ազգային ամենակարեւոր պայ-  
քարներու էջ կեանքը մաշեցուցած դործիչ մ'է-  
Վիսնալով հանդերձ որ « ՉՅԻՆՈՒԻ չի և Ազեք-  
սանդրիոյ ընտրական պայքարներուն մասնակցիլը  
պարզապէս մտանդը արհամարհել կը նշանակէր ,  
անօրինակ զրկանքներու , տարապայման հալածա-  
նաց դէմ տակաց , և բուն իրողութեանց դիտողին  
անդիտակ բերաններէ ալ անճաշ աւանտեզի բամ-  
բասանքներու և շրախօտութեան , առարկայ դառ-  
նալու չափ համբերութիւն ունեցաւ , միմիայն  
կեանքի քնարին ազեչէն լարերուն վրայ իր թը-  
թուացուցի . կնանտոյտիլը դաւնահնչուն մահերդ-  
ներ հիւսելով անկարեկիր սիրտերը թունդ հա-  
նելու . դերազնիւ « զգացումն » :

Ահա փորձառու կեանք մը , որ օրին մէկը՝  
ժանրածանր այս մտահոգութեանց շտաշտաշար  
տուղտուկէն պարտասած թերեւ՝ աննշմարելի մնա-  
լու պիտի ենթարկուի — եթէ այդ կարեւր է —  
Մինչդեռ այս կարգի բազմազան փորձառութիւն-

1147  
30

ներէ անցնող տուօուն մէկը՝ կարող էր այս կամ այն եղանակաւ ընդ միշտ օգտակար հանդիսանալ իր ազգին, որ ամէն ժամանակէ շատ աւելի պէտքը ունի այդպիսիներուն :

Ի՞նչ զոհողութիւն կ'ընէ ու պէտք էր որ ընէր ազգը ատոնց համար . ո՞չ ապաքէն միայն ու միմիայն հալածանք . . . .

Այս կարգի խղճահարութիւնը որո՞ւ բաժինըն է կ'ըսենք, երբ ճշմարտութիւնները անճանաչելի դառնալու աստիճան կը խեղաթիւրուին, երբ ստութիւնն ու կեղծիքը հրապարակին տիրելու ազատութիւնը կը վայելեն, երբ կիրքերը իրենց անիրաւ յաղթանակներովը պարծենալու կը նկրտին և ասպարէզը կտրելու վրայ են . երբ արդարութիւնը թաւալագլոր կ'ըլնայ անխղճի սադրանքներու մանգաղին առջև ու աւերածներու դէղեր կը կուտակէ հոս ու հոն, երբ այս վերջինը մանաւանդ շատ տեղերէ իր զգալի բացակայութեամբը անշափելի խորշեր կը պեղանկեղծ մարդոց սրտերուն մէջ, երբ ընկերային դիտակից համարուած դասակարգին իսկ խղճին դռները խաղառ կը փակուին ամէն կարգի, սեպի ու տեսակի տառապանքներու և ցաւերու առջև, որո՞ւ բաժին կ'ըլնայ այն ատեն խղճահարութիւնը :

ՄԱՆՕԹ . - Յաջորդ գրական կ'աւարտի .







ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.



220036261

A <sup>11</sup> 36961